

# Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի փաստաթուղթ

17 Նոյեմբերի 2003թ.

## Ռազմավարությունը Հայաստանում

Միայն պաշտոնական օգտագործման համար

Սույն փաստաթուղթը սահմանափակ շրջանառության փաստաթուղթ է և կարող է օգտագործվել ստացողի կողմից միայն իր պաշտոնական պարտովորությունների կատարման ներքո: Փաստաթղթի բովանդակությունը ենթակա չէ հրապարակման առանց Բանկի թույլտվության:

# Բովանդակություն

Հապավումներ	1
Նախագահի Ուղերձը	4
Երկրի Ռազմավարություն	8
1. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ	8
1.1. Բանկի գործունեության նկարագիրը	8
1.2. Նախկին երկրի ռազմավարության կատարումը	9
1.3. Բանկի ծրագրերի ներգործությունը անցման գործընթացի վրա և գործունեությունից քաղած դասերը	11
2. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	14
2.1. Բարեփոխումների ընդհանուր միջավայրը	14
2.2. Անցման Գործընթացի Առաջընթացը և Տնտեսության Իրավիճակը	17
2.3 Կապիտալի հասանելիությունը և ներդրումային պահանջները	25
3. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	26
3.1 Ռազմավարության ժամանակաշրջանում Բանկի Գործունեության Գերակայությունները	26
3.2. Ճյուղային Գերակայությունները և Նպատակները	28
4. Այլ Միջազգային Ֆինանսական Կազմակերպությունները և Երկկողմ Դոնորները	32
Հավելված 1 - Քաղաքական գնահատական	38
Հավելված 2 - Շրջակա միջավայրի պահպանման խնդիրներ	43
Հավելված 3 - Օրենսդրական Բարեփոխումներ	45
Հավելված 4 - Ընրտանքային տնտեսական ցուցանիշներ	51
Հավելված 5 - Տեխնիկական աջակցման ծրագրեր	<b>Error! Bookmark not defined.</b>
<b>Error! Bookmark not defined.</b>	

# Հապավումներ

ՀՖԲ	Հայաստանի Ֆոնդային Բորսա
ԲԱԾ	Բիզնեսի Խորհրդատվության Ծրագիր
ԲՄԸՀ	Բիզնես Միջավայրի և Ընկերությունների Հետազոտություն
ՀԿԲ	ՀՀ Կենտրոնական Բանկ
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԿԳԻ	Կոռուպցիայի Գնահատման Ինդեքս
ՄՁԴ	Միջազգային Ջարգացման Դեպարտամենտ
ՈՒՆՀ	Ուղղակի Ներդրումների Հիմնադրամ
ԵՀ	Եվրոպական Հանձնաժողով
ԸՂԱ	Ընտրությունների Դիտորդների Առաքելություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՄԷՀ	Եվրոպայի Միջուկային Էներգետիկայի Հանձնաժողով
ԱՈՒՆ	Արտասահմանյան Ուղղակի Ներդրումներ
ՀՆԱ	Համախառն Ներքին Արդյունք
ՎՋՄԲ	Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ
ՄՖԿ	Միջազգային Ֆինանսական Կորպորացիա
ՄՖՀ	Միջազգային Ֆինանսական Հաստատություն
ԱՇՄԿ	Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն
ՄՆԳԵԿ	Միջազգային Նավթի և Գազի Եվրոպայի Կազմակերպություն
ԲԸ	Բաժնետիրական Ընկերություն
ԲԸՄՕ	Բաժնետիրական Ընկերությունների Մասին Օրենք
ՇՄՊԱԾ	Շրջակա Միջավայրի Պահպանման Ազգային Ծրագիր
ԱԷԿ	Ատոմային Էլեկտրակայան
ՄԻԺԻԳ	Մարդու Իրավունքների և Ժողովրդավարության Ինստիտուտի Գրասենյակ
ՏՀԶԿ	Տնտեսական Համագործակցության և Ջարգացման Կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն
ԳՊ	Գնողունակության Պարիտետ
ԱՆՈԾ	Աղքատության Նվազեցման Ռազմավարական Ծրագիր
ԿԱԿ	Կառուցվածքային Աջակցման Վարկ
ՊԶ	Պետական Ձեռնարկություն
ՓՄԶ	Փոքր և Միջին Ձեռնարկություն
ՄՓԾ	Մենեջմենթի Փորձագիտության Ծրագիր
ՏՀ	Տեխնիկական Համագործակցություն
ԱՆԾ	Առևտրի Խթանման Ծրագիր
ԹԻՄԿ	Թրանսպերենսի Ինթերնեյշնլ Միջազգային Կազմակերպություն
ՋԷԿ	Ջերմային Էլեկտրակայան
ԵԿԱՏՄ	Եվրոպա-Կովկաս-Ասիա Տրասպորտային Միջանցք
ՄԱԶԾ	Միացյալ Ազգերի Ջարգացման Ծրագիր
ԱՄԶԳ	ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալություն
ՀՐԽ	Համաշխարային Բանկի Խումբ
ԱՄԿ	Առևտրի Միջազգային Կազմակերպություն
ԱՄՀ	Արժույթի Միջազգային Հիմնադրամ
ՎՋԵԲ	Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ

# 1. Նախագահի Ուղերձը

Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է բազմակուսակցական ժողովրդավարության, պլուրալիզմի և շուկայական տնտեսության սկզբունքներին և համապատասխանում է Բանկի Հիմնադրման Պայմանագրի Հոդված 1-ի պայմաններին, սակայն այդ սկզբունքների կիրառումը անցյալ ռազմավարության ժամանակահատվածում փոփոխական է եղել: Չնայած նրան, որ երկիրը հաջողությունների է հասել տնտեսության, գների ազատականացման և որոշ կառուցվածքային բարեփոխումների ոլորտում տարածաշրջանի այլ երկրների հետ համեմատ, առկա են խնդրահարույց հարցեր կապված 2003թ. անցկացված նախագահական և խորհրդարանական ընտրությունների, մամուլի ազատության և օրենքի գերակայության ապահովման հետ: Անկախության ձեռք բերման շրջանից ի վեր Հայաստանը ժողովրդական բարեփոխումների շնորհիվ լուրջ առաջընթաց է ապրել, որոնց արդյունքում երկիրը 2001թ.-ին անդամակցեց Եվրոպական Խորհրդին: Նորընտիր իշխանությունները հնարավորություն ունեն վերադարձ կատարել դեպի այդ բարեփոխումների քաղաքական ուղղվածությունը, վերականգնել հասարակության վստահությունը և քաղաքական քայլեր ձեռնարկել երկրում անցման ժամանակաշրջանի հետ կապված առկա խնդիրների լուծման ուղղությամբ: Իշխանությունները հետամուտ են եղել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծմանն ուղղված բանակցությունների շարունակությանը, սակայն խնդրի վերջնական լուծման հասնել չի հաջողվել: Առանց այս հիմնահարցի լուծման, Հայաստանի մասնակի մեկուսացվածությունը տարածաշրջանում կշարունակի սահմանափակել երկրի տնտեսական առաջընթացն և խոչընդոտ կհանդիսանա Անդրկովկասում կարևոր տարածաշրջանային նախաձեռնությունների ձանապարհին:

Տնտեսության ոլորտում երկրի մակրոտնտեսական առաջընթացը զգալիորեն բարելավվել է վերջին տարիներին: Վերջին երկու տարվա միջին տնտեսական աճը կազմել է 11.2 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է եղել արդյունաբերության և շինարարության ոլորտներով: Պահպանվել է սղաճի ցածր մակարդակը և իշխանություններին հաջողվել է զգալիորեն նվազեցնել ֆիսկալ դեֆիցիտը: Ընթացիկ հաշվի դեֆիցիտը նույնպես զգալիորեն նվազել է 2002թ.-ին: 2003թ.- փետրվար ամսին Հայաստանը պաշտոնապես անդամակցեց ԱՄԿ-ին:

Արտաքին պարթի գծով իրավիճակը բարելավվել է Ռուսաստանի հետ ձեռք բերված «բաժնետիրություն պարտքի դիմաց» ծրագրի շնորհիվ: Կառավարությունը սակայն պետք է շարունակի զգուշորեն կառավարել պետական պարտքը և պետական ներդրումներն իրականացնի ըստ գերակայությունների, հաշվի առնելով բյուջեյի եկամուտների առկա ցածր մակարդակը և նախատեսվող նոր պարտավորությունները: Ըստ ԱՄՀ-ի կառավարության հետ համաձայնեցրած ծրագրի, նոր պետական պարտքի ավելացումը ոչ կոնցեսիոն պայմաններով առայժմ սահմանափակված է:

Հայաստանը ցածր ազգային եկամուտ ունեցող երկիր է (2002թ.-ին մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը կազմել է 789 ԱՄՆ դոլար): Սակայն վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած կայուն տնտեսական աճի շնորհիվ աղքատ բնակչության թիվը նվազել է 1998/1999թ.-ի 55 տոկոս մակարդակից և 2001թ.-ին կազմել է 48

տոկոս: Աղքատության մակարդակի հետագա նվազեցումն ապահովելու նպատակով կառավարությունը մշակել է Ազգատության Նվազեցման Ռազմավարական Ծրագիր (ԱՆՌԾ): Հայաստանը համեմատաբար լավ հարաբերություններ է պահպանում ԱՄՀ-ի և ՀԲ-ի հետ: ԱՄՀ-ի կողմից հաջողությամբ իրականացվում է Աղքատության Նվազեցման և Աճի Ծրագիրը, իսկ ՀԲ-ը 2003թ.-ի ապրիլ ամսին հաստատել է նոր հինգերորդ Կառուցվածքային Աջակցման Վարկը (ԿԱՎ-5): Չնայած մակրոտնտեսական լուրջ առաջընթացի և մի շարք ճյուղային բարեփոխումների, երկրում դեռևս առկա են կառուցվածքային բարեփոխումների հետագա իրականացման և գործարարության միջավայրի բարելավման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ: Սեփականաշնորհումը հիմնականում ավարտելուց հետո դեռևս ամբողջովին իրականացված չեն սեփականաշնորհումից հետո պահանջվող վերակառուցումները: Ֆինանսական հատվածում, չնայած բանկային ոլորտի բարեփոխումների առաջընթացին, ոլորտը մնում է թերզարգացած և ֆինանսական միջնորդությունը դեռևս գտնվում է խիստ սահմանափակ մակարդակի վրա: Չնայած որոշակի առաջընթացի, գործարարության միջավայրը շարունակում է բարդ մնալ: Մասնավոր հատվածի զարգացմանը և ՌԻԱՆ-ի աճին խոչընդոտում է հայկական շուկայի փոքրությունը և երկրի մասնակի մեկուսացվածությունը տարածաշրջանի շուկայից:

Վերը նշված պայմանների ներքո, Հայաստանում անցումային տնտեսության հիմնախնդիրներն են.

- բարելավել գործարար միջավայրը, որը շարունակում է կաշկանդված մնալ իրավական դաշտի և լայնածավալ կաշառակերության պատճառով;
- խթանել ֆինանսական հատվածի արդյունավետության բարձրացումը և վստահելիությունը կոնսոլիդացիայի և համակարգային զարգացման միջոցով;
- նպաստել պետական ենթակառուցվածքի առևտրականացմանը, շուկայական տնտեսությունների և շուկայական կառավարման մեխանիզմների ներդրման միջոցով;
- ավարտել սեփականաշնորհումը և արագացնել սեփականաշնորհված ձեռնարկությունների վերակառուցումը;
- ապահովել պարտքի կայունությունը և վճարունակությունը:

2003թ.-ի վերջի դրությամբ Բանկի ընթացիկ ծրագրերի ամբողջ գումարը Հայաստանում կազմել է 51.4 միլիոն եվրո, որը ներառում է 8 ծրագիր էներգետիկայի, տրասպորտի, արդյունաբերության և ֆինանսական հատվածներում: Ծրագրերից վեցը մասնավոր ոլորտի ծրագրեր են, որոնք կազմում են ընդհանուր գումարի 44 տոկոսը: Անցյալ ռազմավարության ժամանակաշրջանում ՎԶԵԲ-ը իրականացրել է 4.2 միլիոն եվրո ընդհանուր գումարի երեք նոր ծրագիր մասնավոր հատվածում, ինչպես նաև 720,000 եվրո գումարի տեխնիկական համագործակցության ծրագիր:

Գալիք ռազմավարության ժամանակաշրջանում Բանկի ծրագրերը հիմնականում կկենտրոնանան մասնավոր հատվածի զարգացման վրա՝ ապահովելով նաև կառավարության հետ ավելի ինտենսիվ քաղաքական երկխոսություն՝ գործարար միջավայրի զարգացման միջոցառումների իրականացման նպատակով: Հաշվի առնելով Հայաստանի պետական պարտքի ներգրավման ներկայիս սահմանափակումները՝ Բանկը չի նախատեսում նոր ենթակառուցվածքային ծրագրեր իրականացնել պետական երաշխիքների հիման վրա, առանց համապատասխան դրամաշնորհային միջոցների օգտագործման:

Գործառնական հիմնական նպատակներն են.

- **Ձեռնարկությունների մակարդակ.** Բանկը կշարունակի ընդլայնել ՓՄՁ և միկրո-ձեռնարկությունների ֆինանսավորման իր ծրագրերը: Ֆինանսավորումը հիմնականում կտրամադրվի տեղական գործընկեր բանկերի հետ իրականացվող վարկային գծերի ծրագրերով, ինչպես նաև Բանկի Ուղղակի Ներդրումների Հիմնադրամի (ՈԻՆՀ) հաշվին կատարվող ուղղակի բաժնետիրական ներդրումների միջոցով: Համատեղ ռիսկի համաֆինանսավորման ծրագրեր ևս կիրականացվեն տեղական գործընկեր բանկերի միջոցով: Վերջերս գործարկված Մենեջմենթի Փորձագիտության ծրագիրը (ՄՓԾ) և Բիզնես Աջակցության Ծրագիրը (ԲԱԾ) ևս կընդլայնվեն: Բանկը պատրաստ է իր աջակցությունը տրամադրել ֆինանսական գործարքների ապահովման, անվճարունակության գործընթացի հստակեցման և հեռահաղորդակցության հատվածի բարելավման իրավա-օրենսդրական դաշտի զարդացման ուղղությամբ:
- **Ֆինանսական հատված.** ՎՋԵԲ-ը կշարունակի նոր տեղական բանկեր նեգրավել ՓՄՁ վարկային գծերի ծրագրով և կընդլայնի իր Առևտրի Խթանման Ծրագիրը (ԱԽԾ), նպատակ ունենալով նպաստել երկրում ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացմանը: Ելնելով երկրում գործող բանկերի համար սահմանված նվազագույն կապիտալի պահանջներից, Բանկը կշարունակի բաժնետիրական ներդրումների հնարավորություններ փնտրել հայկական առևտրային բանկերում: Ֆինանսական հատվածի կոնսոլիդացիայի գործընթացն աջակցելու նպատակով կքննարկվեն առևտրային բանկերի հնարավոր կլանումների և միաձուլումների համար տրամադրվող աջակցության հնարավորությունները: Փորձ կարվի համապատասխան միջոցներ տրամադրել ներկայումս աճ ապրող հիպոթեկային վարկավորման շուկայի և ոչ բանկային վարկային կազմակերպությունների խթանման համար:
- **Ընթացիկ ծրագրերի մոնիտորինգ և իրականացման ապահովում.** Հաշվի առնելով Բանկի կողմից անցյալում իրականացված պետական հատվածի ծրագրերի հետ կապված խնդիրները՝ (Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկ և Ջվարթնոց օդանավակայանի բեռնահամալիր) հատուկ ուշադրություն կդարձվի ծրագրերի մոնիտորինգին, որպեսզի լուծում տրվի ներկայիս խնդիրներին և ապահովվի այս ծրագրերի հետագա զարգացումը:
- **Ենթակառուցվածք և պետական սեփականություն հանդիսացող սպասարկման ձեռնարկություններ.** Բանկը փորձ կկատարի ներդրումային հնարավորություններ գտնել պետական և մարզային սեփականություն հանդիսացող հասարակական սպասարկման և ենթակառուցվածքային ձեռնարկություններում, առանց ապավինելու պետական երաշխիքների վրա: Այս ներդրումները կիրագործվեն համապատասխան կառուցվածքային կամ ինստիտուցիոնալ ռեֆորմների իրականացման պայմանով:

Հայաստանում ծրագրեր իրականացնելիս բանկը կշարունակի առաջնորդվել շրջակա միջավայրի պահպանման կանոնակարգերով և անհրաժեշտության դեպքում կմշակի նաև շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների նախագծեր: Բանկը կհամագործակցի միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների հետ հատկապես ԱՆՈԾ-ի իրականացման ոլորտում, ինչպես նաև ծրագրային և քաղաքական երկխոսության ոլորտում: Բանկը կփորձի լրացուցիչ դրամաշնորհային

միջոցներ գտնել տարբեր դոնորների աղբյուրներից և այդ միջոցների հաշվին համարել իր կողմից ընտրված ներդրումային ծրագրերի նախապատրաստման և իրականացման ծախսերը: Բանկը վերանայում է իր գործիքակազմը անցման սկզբնական փուլում գտնվող երկրներում իր ծրագրերը լավագույնս նպատակադրելու և ընդլայնելու մտադրությամբ, որը նաև կկիրառվի Հայաստանում:

Սույնով առաջարկում եմ, որ Բանկը հաստատի ներկայացված ռազմավարությունը:

Ժան Լեմիեր

## II. Երկրի Ռազմավարություն

### 1. Բանկի գործող ծրագրերը

#### 1.1. Բանկի գործունեության նկարագիրը

Առ 30 սեպտեմբերի 2003թ. Բանկը Հայաստանում իրականացրել 92.7 միլիոն եվրո ընդհանուր գումարի 10 ներդրումային ծրագիր էներգետիկայի, տրանսպորտի, արդյունաբերության և բանկային հատվածներում. Ծրագրերից երեքը պետական հատվածի ծրագրեր են 68.4 միլիոն եվրո ընդհանուր գումարի (համախառն ծրագրերի գումարի 74 տոկոսը) և ևս յոթ ծրագիր (վեց հաճախորդի հետ) մասնավոր հատվածի ծրագրեր են 24.3 միլիոն եվրո ընդհանուր արժողությամբ (համախառն ծրագրերի գումարի 26 տոկոսը): Համախառն ծրագրային հատկացումների գումարը կազմել է 89.6 միլիոն եվրո: Տրամադրված տեխնիկական համագործակցության միջոցների գումարը կազմել է 5.1 միլիոն եվրո: Ընթացիկ ծրագրերի զուտ մնացորդային գումարը կազմել է 51.4 միլիոն եվրո, որից 97 տոկոս գումարը արդեն հատկացված է:


Աղյուսակ 1. Ծրագրային գումարները և մնացորդային արժեքը առ 30 սեպտեմբեր 2003թ.

Ճյուղ	Ծրագրային գումար					Զուտ մնացորդ			
	Ծրագրերի քանակը	Ընդհանուր արժեք	ԿԶԵԲ-ի ֆինանսավորումը	ԿԶԵԲ-ի ֆինանսավորման %-ը	Հատկացվել է	Մնացորդ	Ընդհանուր մնացորդի %	Ծրագրի չհատկացված մասը	Գործառնական ակտիվներ
Ֆինանսական ոլորտ	5	4.6	4.6	5%	2.9	2.9	5%	0.2	2.7
Ենթակառուցվածք	2	99.6	67.8	73%	67.8	28.8	56%	0.0	28.8
Էներգետիկա	1	76.9	49.4	53%	49.4	22.5	44%	0.0	22.5
Տրանսպորտ	1	22.7	18.4	20%	18.4	6.3	12%	0.0	6.3
Զեռնարկությունների աջակցում	3	49.3	20.3	22%	18.9	19.7	38%	1.4	18.3
Գյուղատնտեսություն	2	45.6	17.7	19%	17.7	17.1	33%	0.0	17.1
Արդյունաբերություն	1	3.7	2.6	3%	1.2	2.6	5%	1.4	1.2
<b>Ընդհանուր երկրում</b>	<b>10</b>	<b>153.5</b>	<b>92.7</b>	<b>100%</b>	<b>89.6</b>	<b>51.4</b>	<b>100%</b>	<b>1.6</b>	<b>49.8</b>

Ծրագրերի մանրամասն նկարագիրը տրվում է հավելված 5-ում

Ծրագրերի զուտ մնացորդային արժեքի բաշխվածությունը հետևյալն է. ֆինանսական հաստատություններ՝ 5%, ենթակառուցվածք՝ 56%, ձեռնարկությունների ոլորտ (գյուղատնտեսություն և ընդհանուր արդյունաբերություն) 38%. Ընթացիկ 8 ծրագրերից մեկը բաժնետիրական ներդրում է, 6-ը վարկային ծրագրեր են և մեկը առևտրային երաշխիք է: Բաժնետիրական ներդրումները կազմում են Բանկի ընդհանուր ծրագրերի 2 տոկոսը:





Վերը նշված գրաֆիկը ցույց է տալիս 1993թ.-ից ի վեր ստորագրված ծրագրերի գումարը և քանակը: 1993-1994թ.թ. ստորագրվել է երկու խոշոր ծրագիր որոնք ապահովված են պետական երաշխիքով: Դրանք են՝ Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկի և Ջվարթնոց օդանավակայանի բեռնահամալիրի ծրագրերը: Գյուղատնտեսական մեծածախ շուկայի ծրագիրը ստորագրվել է 1995-ին: Այնուհետև նոր ծրագրեր չեն ստորագրվել մինչև 1999թ.: 1999թ.-ից սկսած ստորագրվել են ևս 7 ծրագիր, որոնք, բացառությամբ Երևանի Կոնյակի Գործարանի հետ ստորագրված ծրագրի, փոքր գումարների ծրագրեր են և արտացոլում են երկրում դեռևս թերզարգացած ֆինանսական ենթակառուցվածքը, բարդ գործարար միջավայրը և բաժնետիրական ներդրումների փորձի բացակայությունը:

Նախորդ ռազմավարության ժամանակաշրջանում ՎՁԵԲ-ի կողմից ծրագրեր են իրականացվել արդյունաբերության և ֆինանսական հատվածներում: 2002թ.ին ստորագրվել է երեք նոր ծրագիր 4.2 միլիոն եվրո արժողությամբ, որոնք նրառում են մեկ վարկային գիծ տեղական առաջատար բանկերից մեկի հետ, մեկ առևտրի խթանման ծրագիր և մեկ վարկ տեղական պղնձաձուլական ընկերությանը:

## 1.2. Երկրի նախկին ռազմավարության կատարումը

Երկրի նախկին ռազմավարությունը (2001թ.-ից մինչ այժմ) իրականացվել է հետևյալ կերպ.

- **Նոր ծրագրեր.** Ծավալային առումով նոր ստորագրված ծրագրերը փոքր են, սակայն կարևոր դեր ունեն ռազմավարության հիմնական սկզբունքների իրականացման տեսակետից (ՓՄՁ աջակցություն և բանկային հատված) և նշանակալից են որպես անցման գործընթացի ապահովման գործոն: 2001թ.-ին ստորագրվել է մեկ ծրագիր, այնուհետև ստորագրվել է երկուսը՝ մեկը ֆինանսական հատվածում, մյուսը՝ արդյունաբերության: Ստորագրվել է 0.9 միլիոն եվրո գումարի վարկային գծի ծրագիր Անելիք Բանկի հետ և 0.7 միլիոն եվրո գումարի առևտրային երաշխիքի ծրագիր Հայէկոնոմբանկի հետ: Հայաստանյան պղնձաձուլական «Արմենիան Քոփր Փրոգրամ» մասնավոր ընկերության հետ ստորագրվել է 2.6 միլիոն եվրո գումարի վարկային ծրագիր:

- **Ձեռնարկությունների ոլորտ/ՓՄՁ.** Հայաստանում արտասահմանյան ներդրողների կողմից ներդրումների իրականացման քաջալերումն առայժմ չի հանգեցրել ցանկալի արդյունքների, որի պատճառներն են արտասահմանյան ուղղակի ներդրումների ցածր մակարդակը և տնտեսապես հիմնավորված ծրագրերի բացակայությունը երկրում: Սակայն Բանկը կարողացել է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրել տեղական մասնավոր ներդրողին պղնձաձուլական արդյունաբերության ծրագրի համար շրջանառու միջոցների ապահովման և շրջակա միջավայրի պահպանման աշխատանքների իրականացման համար: Բանկի կողմից հիմնադրված Ուղղակի Ներդրումների Հիմնադրամի (ՈԻՆՀ) աշխատանքը Հայաստանում առայժմ հաջողության չի հասել, հիմնականում բաժնետիրական ներդրումների ոլորտում երկրում ընդհանուր փորձի սակավության պատճառով:
- **Ենթակառուցվածք.** 2002թ.-ին իրականացվեց հայաստանի բաշխիչ էլեկտրական ցանցերի վերակազմավորումն ու երկարատև կառավարման պայմանագրի կնքումը: Սակայն, սեփականաշնորհման գործընթացի որոշակի անհարթությունները թույլ չտվեցին ավարտին հասցնել Բանկի կողմից արդեն իսկ հաստատված ֆինանսական մասնակցության ծրագիրը: Շարունակվեցին բանակցությունները Արմենտելի մենաշնորհային դիրքի սահմանափակման ուղղությամբ, սակայն այս հարցի լուծման ձգձգումը հնարավորություն չընձեռեց ՎՋԵԲ-ի մասնակցության համար: Շարունակվեցին քննարկումները պետական երկաթգծի հնարավոր ֆինանսավորման ուղղությամբ առանց պետական երաշխիքի:
- **Ֆինանսական հատված.** Լրացուցիչ աջակցություն է տրամադրվել ֆինանսական հատվածին նախատեսվածից փոքր ինչ պակաս ծավալներով: Ընդլայնվել է Բանկի ՓՄՁ վարկային գծերի և Առևտրի Խթանման Ծրագրի օգտագործումը, որը սկզբնական շրջանում որոշակի դժվարությունների հանդիպեց փոխադարձ փորձի սակավության պատճառով: Ֆինանսական հատվածում բաժնետիրական ներդրումների կատարման փորձերը առայժմ հաջողության չեն հանգեցրել, որը պայմանավորված է Հայաստանում բաժնետիրական ներդրումների գծով փորձի սակավությամբ: Սակայն այս իրավիճակը դրական զարգացում է ապրում և զարգացման կարևոր խթան է հանդիսանում Բանկի կողմից տրամադրված տեխնիկական աջակցությունը: Երկրում առկա մի շարք միջազգային և դոնոր ծրագրերի ամբողջությունը (այդ թվում նաև սփյուռքի կողմից ֆինանսավորված) հանգեցրին Բանկի կողմից նախատեսվող միկրոֆինանսավորման բանկի ստեղծման աշխատանքների դադարեցմանը և ավելի նպատակահարմար գտնվեց միջոցները ուղղել առևտրային բանկերի հետ իրականացվող աշխատանքին:
- **Ծրագրերի Կառավարում.** Ջանքեր են գործադրվել երկու խնդրահարույց ծրագրերի (Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկ և Զվարթնոց օդանավակայանի բեռնահամալիր) արդյունավետության բարձրացման և լրացուցիչ օտարերկրյա ներդրումների խթանման ուղղությամբ: Այս ծրագրերն իրականացվել էին պետական երաշխիքների հաշվին և նրանց հետագա զարգացման երկարատև լուծումները առայժմ չեն գտնվել:
- **Նոր ծրագրերի հաստատում.** Նոր ծրագրերի զարգացման գործընթացը սահմանափակվել է մի շարք գործոններով: Դրանցից են՝ առաջարկվող ծրագրերի փոքր չափը, տեղական բարդ գործարար միջավայրի հետ կապված ռիսկերը, երկրի հարաբերական մեկուսացվածությունը տարածաշրջանային շուկաներից և ներքին շուկայի փոքր չափը, մասնավոր

հատվածի թերզարգացվածությունը, բանկային հատվածի սահմանափակումները, մի շարք դոնորների և սփյուռքի կազմակերպությունների հաշվին ոչ շուկայական պայմաններով տրամադրվող միջոցների առատությունը, պետական երաշխիքների հետագա տրամադրման անհնարիությունը, ռազմավարական օտարերկրյա ներդրողների սակավությունը և բաժնետիրական ներդրումների փորձի պակասը:

Այնուամենայնիվ, ներկայումս Բանկը ունի նախապատրաստման փուլում գտնվող յոթ ծրագիր՝ երկու ուղղակի բաժնետիրական ներդրման ծրագիր արդյունաբերության ոլորտում, մեկ ներդրում՝ տարածաշրջանային գյուղատնտեսական ծրագրի շրջանակներում, մեկ նոր վարկային գծի ծրագիր՝ տեղական բանկի հետ, մեկ բաժնետիրական ներդրման ծրագիր՝ տեղական բանկում և երկու նոր ծրագրեր՝ տեղական բանկերի հետ Առևտրի Խթանման Ծրագրի շրջանակներում (տես հավելված 5-ը): Չնայած վերը նշված ծրագրերը գումարով փոքր են, սակայն պահանջում են նույն ծավալի աշխատանք, ինչպիսին կպահանջվեր ավելի մեծ գումարի ծրագրեր իրականացնելիս:

### **1.3. Բանկի ծրագրերի ներգործությունը անցման գործընթացի վրա և գործունեությունից քաղած դասերը**

#### **1.3.1 Ծրագրերի արդյունավետությունը**

Հայաստանում ՎՋԵԲ-ի ներկայիս ծրագրերի միջինացված ռիսկի գնահատականը 5.86 է: Ի համեմատություն, Հարավային Եվրոպայի և Կովկասի երկրների միջին ցուցանիշը 5.91 է, իսկ Բանկի ընդհանուր միջին ցուցանիշը՝ 5.58:

Պետական երաշխիքների հաշվին իրականացրած երկու ծրագրերը շարունակում են խնդրահարույց մնալ: Բանկի կողմից ֆինանսավորված Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկի ծրագրի շինարարության ընթացքում առաջացած գերածախսերը հանգեցրին ծրագրի դադարեցմանը: Շինարարությունը ավարտի հասցնելու համար կպահանջվի 40 միլիոն ԱՄՆ դոլարի լրացուցիչ ներդրում: Շարունակվում են բանակցությունները կառավարության հետ, հնարավոր լուծումների վերաբերյալ: Բանկի կողմից ֆինանսավորված Զվարթնոց օդանավակայանի բեռնահամալիրի արդյունավետությունը շարունակում է ցածր մնալ, որը պայմանավորված է օդանավակայանի կողմից սպասարկվող բեռների ծավալի ցածր մակարդակով: Վերջերս ստորագրված մասնավոր կառավարման պայմանագիրը հուսադրում է որ հնարավորություն կստեղծվի ավելացնել օդային փոխադրումների ծավալները և բարձրացնել արդյունավետությունը: Բանկը շարունակում է քննարկումները ինչպես մասնավոր կառավարչի, այնպես էլ կառավարության հետ և պատրաստ է քննարկել ծրագրի արդյունավետության բարձրացման առաջարկները:

#### **1.3.2 Բանկի գործունեության ներգործությունը անցման գործընթացի վրա**

Բանկի գործունեությունը տարբեր ազդեցություններ է ունեցել երկրում անցման գործընթացի վրա և վերջին տարիներին ազդեցությունը ավելի դրական միտում ունի: Սկզմբական շրջանում (1993-1995) ստորագրված ծրագրերը (Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-

րդ բլոկ և Զվարթնոց օդանավակայանի բեռնահամալիր) ցանկալի արդյունքներ չեն ապահովել անցման գործընթացի առումով:

Բանկը սակայն հաջողության է հասել մասնավոր ձեռնարկատիրության զարգացման և բանկային ոլորտի խթանման ծրագրերում, որոնք լուրջ դրական ազդեցություն են ունեցել անցման գործընթացի վրա:

Երևանի կոնյակի գործարանի հետ կատարված ծրագրերը հաջողությամբ են իրականացվում և կորպորատիվ կառավարման օրինակելի նախատիպ են հանդիսանում: Երևանի կոնյակի գործարանի վարկային ծրագիրը հնարավորություն ընձեռեց համագործակցել երկրում խոշորագույն օտարերկրյա ներդրողներից մեկի հետ: Ընկերությունը հաջողությամբ արտահանում է իր բարձրորակ արտադրանքը և իր հերթին նպաստում երկրում գյուղատնտեսական հատվածի զարգացմանը: Արմենիան Քոփր Փրոգրամ պղնձածուլական ընկերության վարկավորումը թույլ տվեց վերագինել ընկերությունը և ընդլայնել արտահանման ծավալները: Ծրագիրը նաև օրինակելի փորձ է ներառում մենեջմենթի, կորպորատիվ կառավարման և շրջակա միջավայրի պահպանության ասպարեզում: Ծրագրի արդյունքում լրացուցիչ շրջանառու միջոցներ են տրամադրվել ընկերությանը արտադրության արտադրողականությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Շահութաբերության աճը հնարավորություն կընձեռի կատարել շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված կարևոր միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում կազմվել է շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների ցանկ, որոնց արդյունքում նախատեսվում է նվազեցնել վնասարար արտանետումները և վերահսկել թափոնների մակարդակը:

Նույնանման հաջողությամբ են իրականացվում նաև Բանկի ծրագրերը ֆինանսական հատվածում (երկու ծրագրի Առևտրի խթանման Ծրագրի շրջանակներում և մեկ բաժնետիրական ներդրում) որոնք դրական ազդեցություն ունեն ինչպես բանկերի զարգացման, այնպես էլ ՓՄՁ աջակցության առումով: Վերջերս գործարկված Բիզնեսի Աջակցության Ծառայությունը և Մենեջմենթի Փորձագիտության ծրագիրը, որոնք ֆինանսավորվում են Եվրոպական Հանձնաժողովի կողմից, նշանակալի դեր ունեն տեղական ընկերություններին խորհրդատվական ծառայությունների մատուցման գործում:

### **1.3.3 Ծրագրերից քաղած դասերը**

Նախկին ռազմավարության ժամանակաշրջանում հետազոտվել է Բանկի կողմից Հայաստանում իրականացված երեք ծրագիր՝ Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկի ծրագիրը, Զվարթնոց օդանավակայանի բեռնահամալիրի ծրագիրը և Երևանի Կոնյակի Գործարանի ծրագիրը: Առաջին երկու ծրագրերը իրականացվել են Բանկի ստեղծման սկզբնական տարիներին, այսինքն 1993-1994 թ.թ. իսկ վերջինը՝ 2000թ.-ին:

Այս ծրագրերի կատարման ընթացքում կուտակված փորձից կարելի է եզրակացնել հետևյալ ընդհանուր դրույթները.

**Ենթակառուցվածքի և էներգետիկայի ոլորտում:** Խոշոր ծրագրերի իրականացումը կապված է մեծ ռիսկերի հետ, եթե այն իրագործվում է հապճեպ և ուղղված է երկրում

առկա անհապաղ խնդիրների լուծմանը: Հայաստանի պարագայում այս ծրագրի նպատակներից մեկն էր նաև՝ շտապ լրացուցիչ էներգետիկ հզորություններ ստեղծել կանգ առած ատոմակայանի հզորությունը մասամբ փոխարինելու համար: Չնայած խնդրի անհապաղությանը, այս ծրագրերի իրականացման հաջողությունը կախված է նախապատրաստական աշխատանքներից և նախածրագրային լուրջ հետազոտություն է պահանջում: Հետազոտության ընթացքում մատնանշված ռիսկերի նվազեցման համար ստեղծված պահուստային միջոցները կարող են բավարար չլինել այդ ռիսկերի ներքո ծրագիրը ավարտի հասնելու համար: Ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է նաև բավարար չափով հաշվի առնել տարածարջանի քաղաքական հնարավոր զարգացումները: Ի հայտ եկած թերություններից անկախ, հարկ է նշել, որ 1992-1993թ.թ. ձգնաժամային իրավիճակը լուրջ բարդություններ էր ստեղծել ծրագրի իրականացման համար և լուրջ փորձություն հանդիսացավ ոլորտի համար: Բանկի կողմից ծրագիրը գնահատելիս նշվել է, որ այդ ժամանակաշրջանում ծրագրի համար խոչընդոտ հանդիսացող ռիսկերը այժմ արդեն, որպես կանոն, մշտապես հաշվի են առնվում նմանատիպ ծրագրերի նախագծման փուլում: Այս տիպի ծրագրերը հաջողությամբ իրականացնելու համար կարևոր է ունենալ ծրագրի իրականացման հզոր գրասենյակ, վերահսկող կազմակերպություն և ձկուն մոնիտորինգի համակարգ: Իրականացման բոլոր փուլերում անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական փորձ ունեցող անձնակազմ:

**Որակի ապահովում.** Բանկը պետք է իրատեսական մոտեցում ցուցաբերի արտաքին խորհրդատուների կողմից կատարված շուկայի կանխատեսումներին և ապահովի առավել լավատեսական սցենարի ընդունումը: Որոշ հանգամանքներում նպատակահարմար է ներգրավել լրացուցիչ խորհրդատուներ և անաչառ կարծիք կազմել ձգնաժամային տնտեսության պայմաններում ծրագրերի իրականացման ժամանակ: Որպես ծրագրային ռիսկի կարևոր մաս անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքական միջավայրի իրատեսական զարգացման սցենարները: Խիստ փոփոխական և անհայտ հանգամանքներով բնորոշվող իրավիճակում հարկավոր է վերլուծության հիմքում նախատեսել նաև վատագույն սցենարը և նրանից բխող ֆինանսական կանխատեսումները:

**Ռազմավարական ներդրողների դերը.** Բարձր ռիսկայնություն և բարդ միջավայր ունեցող երկրներում, ինչպիսիք են Կովկասի տարածաշրջանի երկրները, որտեղ առկա են լուրջ օրենսդրական խնդիրներ և մեծ է կառավարության ներգործությունը մասնավոր հատվածի վրա, ՎՋԵԲ-ի մասնակցությունը ծրագրերում պետք է զուգորդվի ֆինանսապես կայուն և փորձառու ռազմավարական ներդրողների մասնակցությամբ ծրագրի տարբեր ոլորտների կառավարման արդյունավետության ապահովման համար:

**Ծրագրային ձկունություն.** Ծրագրերի նախագծման ընթացքում անհրաժեշտ է ապահովել կիրառվող ֆինանսական գործիքների, ծավալների և ժամկետների որոշակի ձկունության մակարդակ՝ ինչպես օրինակ նախատեսված է վերջերս ՎՋԵԲ-ի կողմից իրականացվող բանկային ոլորտի ծրագրերում: Ծրագրի նախապատրաստման ժամանակ անհրաժեշտ է նախորոք հաշվի առնել արագ փոփոխվող ֆինանսական և իրական հատվածի հետագա զարգացումները:

### 1.3. Մասնավոր հատվածի բաժինը ընդհանուր ծրագրերում

Առ 30 սեպտեմբեր 2003թ. ՎՋԵԲ-ի կողմից կատարված ծրագրերի ընդհանուր գումարի 26 տոկոսը կազմել են մասնավոր հատվածի ծրագրերը: Մասնավոր հատվածի ծրագրերը կազմել են ծրագրերի զուտ մնացորդային արժեքի 44 տոկոսը, իսկ գումարային արժեքով գերակշիռ ծավալ են կազմել Բանկի կողմից պետական երաշխիքի հիման վրա իրականացված և 1993-1994 թ.թ. ստորագրված երկու պետական ծրագրերը: Քանակային առումով՝ Բանկի կողմից Հայաստանում կատարված 10 ծրագրից երեքը պետական հատվածի ծրագրեր են, իսկ մնացած յոթ ծրագիրն իրականացվել են մասնավոր հատվածում: Հաջորդ ռազմավարության ժամանակաշրջանում Բանկը կենտրոնանալու է մասնավոր ծրագրերի իրականացման վրա, սակայն մասնավոր հատվածի ծրագրերի գումարային բաժինը՝ որպես ընդհանուր ծրագրերի մաս, անհավանական կլինի հասցնել նախընտրելի 60% սահմանաչափին:

## 2. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

### 2.1. Բարեփոխումների ընդհանուր միջավայրը

#### 2.1.1. Քաղաքական զարգացումներ

2003թ.-ի մարտ ամսին կայացած նախագահական ընտրություններում նախագահ Քոչարյանի վերընտրումը և նախագահին սատարող կուսակցությունների հաջողությունը 2003թ.-ի մայիսին կայացած խորհրդարանական ընտրություններում ապահովում են երկրի ընտրած շուկայական բարեփոխումների ուղղության շարունակականությունը: Կազմվել է կոալիցիոն կառավարություն, որը բաղկացած է առաջատար Հանրապետական կուսակցության անդամներից և համալրվում է Դաշնակցություն և Օրինաց Երկիր կուսակցությունների անդամներով: Նախկին կառավարության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը և իննը նախարար պահպանեցին իրենց պաշտոնները նոր կառավարության կազմում: Օրինաց Երկիր կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանն ընտրվեց Հայաստանի խորհրդարանի նախագահ: Կառավարությունը և խորհրդարանը հետամուտ են բարեփոխումների իրականացման շարունակական ապահովմանը և 2003թ.-ի հունիսին ընդունել են 2003-2007թ.թ. կառավարության գործունեության ծրագիրը: Սակայն, նոր ընդունված օրենքների արդյունավետ իրագործումը շարունակում է զուգորդվել դժվարություններով և անհրաժեշտություն կա վերականգնել վստահությունը երկրի քաղաքական ինստիտուտների հանդեպ՝ վերջերս անցկացված թերի ընտրություններից հետո: (Քաղաքական իրավիճակի ավելի մանրամասն նկարագիրը բերված է Հավելված 1-ում)

#### 2.1.2. Սոցիալական պայմանները և զբաղվածությունը

Հայաստանը Բանկի գործունեության նվազագույն եկամուտ ունեցող երկրներից մեկն է: Երկրի մեկ շնչին ընկնող Համախառն Ներքին Արդյունքը կազմում է 789 ԱՄՆ դոլար կամ 3,088 ԱՄՆ դոլար գնողունակության պարիտետի ինդեքսով հաշվարկված փոխարժեքով: Գործազրկության պաշտոնական տոկոսը 2002թ.-ին կազմել է 9.4%, սակայն մասնագետների կարծիքով առկա է շատ ավելի բարձր

իրական գործազրկություն՝ թաքնված գործազրկության ներքո: Համաշխարհային Բանկի Կյանքի Պայմանների Համակարգված Հետազոտության (ILCS) համաձայն՝ աղքատ բնակչության թիվը կազմում է 48.3 տոկոս (2001), համեմատած 1998/1999թ.թ. 54.8 տոկոս մակարդակի հետ: Ծայրաստիճան աղքատության մեջ գտնվողների քանակը (ամսեկան 7,979 ՀՀ դրամ կամ 14.40 ԱՄՆ դոլար եկամուտից ցածր մակարդակ) 2001թ.-ին գնահատվել է 20 տոկոս, ընդդեմ 1998/1999թ.թ. 26.8 տոկոս մակարդակի: Աղքատության մակարդակը ավելի բարձր է քաղաքային պայմաններում, որ պայմանավորված է գործազրկության ավելի բարձր մակարդակով: Հայաստանում տնային տնտեսությունների եկամտի մեծ մասը (տարբեր գնահատականներով՝ մինչև ընդհանուր եկամտի 45%-ը) ստացվում է ոչ արտադրական ոլորտից, ինչպիսիք են դրամական փոխանցումները, նպաստները և մարդասիրական օգնությունը: Եկամտի կախվածությունը այս տեսակի միջոցներից չի կարող կայուն համարվել երկարաժամկետ ժամանակահատվածում:

Լայնածավալ աղքատության և գործազրկության պայմաններում շարունակվում է բարձր որակավորում և կրթական մակարդակ ունեցող աշխատուժի արտահոսքը, որը մեկնում է հիմնականում ԱՄՆ, Ռուսաստան և այլ ԱՊՀ երկրներ: Այս հանգամանքը լուրջ խոչընդոտ է հանդիսանում երկրի հետագա զարգացման համար:

Աղքատության նվազեցումը կառավարության հստակ գերակայություններից մեկն է: Պետական միջոցների սակավությունը հնարավորություն չի ընձեռում խնդիրը լուծել բյուջեյի ծախսերի հաշվին, իսկ երկրում ներդրումների և տնտեսական աճի պայմանները սահմանափակված են երկրի փոքր չափով և որոշ հարևան երկրների կողմից կիրառվող տնտեսական շրջափակմամբ: Կյանքի պայմանները բարելավելու և աղքատ բնակչության համար պետական աջակցությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, կառավարությունը 2003թ.-ի օգոստոսին մշակել է Աղքատության Նվազեցման Ռազմավարական Ծրագիր: Այս ծրագիրը հիմք է հանդիսանում դոնորների կողմից ապագայում իրականացվելիք ծրագրերի կորրոկինացման համար և նախանշում է միջին ժամկետի գերակայությունները: Ըստ այս ռազմավարության, աղքատ բնակչության բաժինը նախատեսվում է մինչև 2007թ.-ը նվազեցնել մինչև 35 տոկոս: Աղքատության նվազեցման կարևորագույն գործոն է հանդիսանում մասնավոր հատվածի զարգացումը:

### **2.1.3. Տարածաշրջանային խնդիրներ**

Հայաստանը փոքր երկիր է առանց ծովային սահմանների: Երկիրը փոքր լինելով հանդերձ մեծապես կախված է միջազգային առևտրից, սակայն Թուրքիայի և Ադրբեջանի հետ երկու հիմնական սահմանները շարունակում են փակ մնալ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման բացակայության պայմաններում: Առևտրային շրջանառությանը խոչընդոտում են փակ սահմանները և Վրաստանի ու Իրանի տարածքով բեռնափոխադրումների բարձր սակագները: Մոտակա նավահանգիստը Վրաստանի Փոթի նավահանգիստն է, որի միջոցով է իրականացվում երկրի հիմնական արտահանումն ու ներմուծումը (բացառությամբ բարձր արժեք ունեցող ապրանքների): Սակայն այս ճանապարհի օգտագործումը բավական ծախսատար է քանզի առկա են բազմաթիվ խոչընդոտներ՝ կաշառակերություն, գողություններ, ավտոձանապարհի և երկաթգծի ցածր որակ: Իրանի տարածքով բեռնափոխադրումների արժեքը ավելի ցածր է, սակայն մի շարք երկրներ Իրանի հետ առևտրի սահմանափակումներ ունեն: Ի թիվս այլոց, կան

տրասպորտային կարողությունների և մաքսային ծառայության աշխատանքի հետ կապված բարդություններ:

2003թ.-ին Համաշխարհային Բանկի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում նշվում է, որ Հայաստան ուղևորվող յուրաքանչյուր բեռնատար ավտոմեքենայի համար վճարվում է 1,800-2,000 ԱՄՆ դոլար ընդհանուր գումար, տարբեր տեսակի կաշառքների, անվտանգության ապահովման վճարների, ճանապարհային ուստիկանների և քրեական խմբավորումների գանձումների դիմաց: Հաճախ այս գանձումների չափը գերազանցում է բուն բեռնափոխադրման վարձը: Վրաստանի կողմից մինչև վերջերս խտրական սակագին էր կիրառվում օտարերկրյա տարանցիկ բեռնափոխադրում իրականացնող ընկերությունների հանդեպ, որը վերացվեց միայն 2002թ.-ին միասնական սակագնի կիրառումից հետո: Վերը նշված պատճառներով, Հայաստանի ապրանքների գերակշիռ մասը, հատկապես փոքրածեք և ծավալուն ապրանքները, մրցունակ չեն միջազգային շուկաներում:

#### 2.1.4. Իրավական դաշտ

Չնայած Հայաստանում վերջին տարիներին իրականացվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ, երկրում դեռևս լուրջ խնդիրներ կան օրենքների կիրառման և շուկայական տնտեսության լիարժեք գործունեության համար անհրաժեշտ ինստիտուտների արդյունավետ գործարկման հետ կապված:

Բարելավվել է առևտրային հարցերը կարգավորող օրենսդրությունը, սակայն Հայաստանում գործող մի շարք օրենքների որակը և գործադիր կատարումը ընդհանուր առմամբ չի համապատասխանում ընդունելի միջազգային ստանդարտներին: Այս գնահատականը վերաբերվում է ինչպես արտաքին կամ ներքին, այնպես էլ ուղղակի կամ անուղղակի ներդրումները խթանող օրենսդրությանը: Օրինակ՝ գրավի օրենսդրությունը հիմնականում կայացած է, սակայն կարիք ունի հետագա զարգացման՝ լրացուցիչ օտարերկրյա ներդրումներ խթանելու նպատակով: Հայաստանում ներկայումս գործող կապիտալի շուկայի կարգավորման օրենսդրությունը փաստացիորեն արգելակում է անուղղակի ներդրումների զարգացումը:

Ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրության, օրինակ՝ կորպորատիվ կառավարման օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ նույնիսկ համեմատաբար լավ գրված օրենքները ամբողջությամբ չեն իրագործվում: 1995թ.-ից ի վեր ՎԶԵԲ-ի կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ առևտրային օրենսդրությունը ապահովված չէ բավարար վարչական կամ դատական աջակցությամբ և թերի է կատարվում:

Այս խնդիրները լրջորեն կասկածի են ենթարկում ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա ներդրողների վստահությունը իրավական համակարգի նկատմամբ և մասնավորապես՝ պայմանագրային իրավունքի պաշտպանման իրականացման նկատմամբ: Օրենքների կիրառման հետ կապված դժվարությունների համակարգային և համատարած բնույթը տեղիք է տալիս եզրակացնել, որ Հայաստանի առևտրային օրենսդրության թերությունները և ցածր արդյունավետությունը կապված են ավելի հիմնարար խնդրի հետ, այն է՝



Հայաստանում օրենքի գերիշխանության դեռևս ոչ լիարժեք հաստատման հետ: Հայաստանի առջև ծառայած գերխնդիրը 2003թ-ին և այնուհետև կայանում է առևտրային օրենսդրության բարելավման և միջազգային ստանդարտներին համապատասխանեցման մեջ: Օրենսդրական դաշտի արդյունավետության բարձրացումը հնարավոր է ապահովել միայն դատական համակարգի բարեփոխումների, կաշառակերության հետ պայքարի և օրենքի գերիշխանության ամրապնդման միջոցով:

## **2.1.5 Շրջակա միջավայրի խնդիրներ**

Հայաստանի Շրջակա Միջավայրի Պահպանման Ազգային Նախագիծը (ՇՄՊԱՆ) կազմվել է 1998թ.-ին և նախանշում է հետևյալ գերակայությունները՝ օդի, հողի և ջրի աղտոտվածություն, բնական ռեսուրսների գերօգտագործում և էկոհամակարգերի խախտում (ներառյալ ջրային, հողային, անտառային ռեսուրսների գերօգտագործում և կեսաբազմազանության վտանգում), ինչպես նաև առողջական խնդիրներ և վտանգներ: Ակնկալվում է, որ նախագծի իրականացումը կազմակերպվելու է փուլային ձևով և աստիճանաբար կնպաստի շրջակա միջավայրի խնդիրների հանդեպ հասարակական ուշադրության բարձրացմանը: Ինչպես նշվում է ՇՄՊԱՆ-ում, շրջակա միջավայրի պահպանման հարցերը անհրաժեշտ ուշադրություն չեն վայելում Հայաստանում և գերակա չեն համարվում: Շրջակա միջավայրի խնդիրների հասարակական և տեղական հնչողությունը ցածր է և բավարար չեն բնական ռեսուրսների պահպանմանն ուղղված ջանքերը: Հայաստանում շրջակա միջավայրի պահպանման հարցերի վերաբերյալ հասարակության կարծիքը բաժանվում է երկու խմբի՝ մի խումբը համարում է որ այս խնդիրներին անհրաժեշտ է անդրադարձնալ անհապաղ, նրանց հետագա բարդացման միտումները սահմանափակելու նպատակով, իսկ մյուսը համարում է, որ այդ խնդիրների լիարժեք լուծումը հնարավոր է ապահովել միայն միջավայրը աղտոտող արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման և երկրի տնտեսության ամրապնդման խնդրի լուծումից հետո:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները Հայաստանում ներառում են հողի աղտոտվածությունը թունավոր քիմիկատներով, անտառահատումները, անապատացումը, ջրի աղտոտումը (Հրազդան և Արաքս գետերում), Սևանա լճի մակարդակի անկումը և սեյսմիկ գոտում գտնվող Մեծամորի Ատոմակայանը:

Բնության պահպանության օրենսդրական հիմնական սզբունքները ամրագրված են հատուկ օրենքներում: Վերջերս ընդունված օրենքները ներառում են Բնական Ռեսուրսների Օգտագործման և Բնապահպանության Մասին ՀՀ Օրենքը (28 դեկտեմբեր 1998), Բուսական Աշխարհի Մասին ՀՀ Օրենքը (22 դեկտեմբեր 1999) և Կենդանական Աշխարհի Մասին ՀՀ Օրենքը (03 մայիսի 2000): Նախապատրաստման փուլում են գտնվում թունավոր քիմիկատների մասին և աղբի մշակման մասին օրենքները, ինչպես նաև Սևանա լճի մասին օրենքը, որի նախագիծը քննարկվել է խորհրդարանում:

## **2.2. Անցման Գործընթացի Առաջընթացը և Տնտեսության Իրավիճակը**

### **2.2.1. Բանկի գործունեության մակրոտնտեսական պայմանները**

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը աճ է ապրել: 2001-2002թ.թ. միջին տարեկան աճի մակարդակը կազմել է 11.2 տոկոս: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության (ադամանդամշակման, մետաղների, ռեզինի, ծխախոտի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների) և շինարարության ճյուղերի աճով: Մշակված ադամանդների արտահանումը նկատելիորեն աճել է, իսկ շինարարության ոլորտը ընդլայնվել է Ամերիկյան սփյուռքահայ ԼԻՆՍԻ հիմնադրամի հաշվին, որը հատկացրել է 185 միլիոն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ երեք տարվա համար (տարեկան ՀՆԱ 2-3 տոկոս): 2003թ.-ի առաջին իննը ամսում տնտեսության աճը կազմել է 15.2 տոկոս, սակայն այն հավասարապես չէ բաշխված ըստ տնտեսության ճյուղերի, քանի որ արդյունաբերությունը աճել է 20.5 տոկոսով իսկ գյուղատնտեսությունը՝ ընդամենը 0.5 տոկոսով: Աճի հետագա շարունակությունը կախված է միջազգային շուկայում ադամանդների պահանջարկից և արտաքին ֆինանսավորման հետագա աղբյուրների առկայությունից: ԼԻՆՍԻ հիմնադրամի կողմից միջոցների հետագա տրամադրման հարցը դեռևս անհայտ է:

Հայաստանը շարունակում է վարել կշռադատված դրամավարկային քաղաքականություն, որի արդյունքում պահպանվում է սղաճի ցածր մակարդակ և ազգային դրամի հարաբերականորեն կայուն փոխարժեք: Հայկական դրամի հանդեպ Կենտրոնական Բանկը սահմանել է ազատ լողացող փոխարժեք, մասնակի կարգավորիչ ինտերվենցիաների միջոցով: Կառավարությունը ապահովում է ազգային դրամի զսպված աստիճանային դեվալվացիայի ռեժիմ, հայկական արտադրատեսակների մրցունակության ապահովման նպատակով: 2003թ.-ի վերջի դրությամբ սպասվում է սղաճի փոքր ինչ ավելի բարձր մակարդակ ի դեմս վերջին տարիների սղաճի միջին մակարդակի: Սա պայմանավորված է հասարակական սպասարկման ոլորտի սակագների ավելացմամբ, սննդամթերքի գների աճով և և պետական հատվածի աշխատավարձի բարձրացմամբ:

Հարկային քաղաքականության շնորհիվ հաջողվել է նվազեցնել բյուջեյի դեֆիցիտը 2001թ.-ի 3.8 տոկոս մակարդակից մինչև 0.6 տոկոս մակարդակ 2002թ. դրությամբ: Այս արդյունքին հնարավոր եղավ հասնել բյուջեյի ծախսերի նվազեցման և հարկային և մաքսային վարչարարության խստացման շնորհիվ: Բարելավվել է նաև էներգետիկ հատվածի արդյունավետությունը և էներգետիկայի հետ կապված վնասների մակարդակը 2001թ.-ի ՀՆԱ 2.5 տոկոսի հետ համեմատ 2002թ.-ին կազմել է ընդամենը 0.4 տոկոս: Վճարների հավաքագրման ցուցանիշը 81 տոկոսից աճել է մինչև 90 տոկոս: Հարկային եկամուտները դեռևս մնում են ցածր մակարդակի վրա (ՀՆԱ 15 տոկոս) և անհրաժեշտություն կա հետագա բարելավումներ կատարել հարկային վարչարարության ոլորտում: Մի շարք ապրանքների գծով շարունակվում է ավելացված արժեքի հարկի արտոնությունը և հարկահավազությանը խոչընդոտում են թույլ հաշվապահական ստանդարտները և կաշառակերությունը:

Տեղի է ունեցել արտահանման և ներմուծման աճ: 2003թ.-ի փետրվար ամսին Հայաստանը պաշտոնապես անդամակցեց Առևտրի Միջազգային Կազմակերպությանը: Միջազգային առևտրի ծավալները սակայն շարունակում են ցածր մնալ, տրասպորտային ենթակառուցվածքի և կոմունիկացիոն կապերի թերզարգացվածության, ինչպես նաև թույլ մաքսային վարչարարության պատճառով: Հարևան երկրների հետ սահմանները շարունակում են փակ մնալ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդյունավետ լուծման բացակայության պայմաններում:

Հայաստանի արտաքին առևտրի խոշոր մաս է կազմում ադամանդագործական արտադրանքի առևտուրը (ընդհանուր արտահանման 40 տոկոս) և սփյուռքից ստացվող դրամական փոխանցումները: Վերջերս տեղի է ունեցել ընթացիկ հաշվի դեֆիցիտի զգալի նվազում, սակայն դեֆիցիտի մակարդակը առայժմ շարունակում է բարձր մնալ և 2002թ.-ին կազմել է ՀՆԱ 6.6 տոկոս (1998ո. 21.3 տոկոսի համեմատ): Այս դեֆիցիտի ծածկման աղբյուրները հիմնականում սփյուռքից ստացվող դրամական փոխանցումներն են և պաշտոնական միջպետական ֆինանսավորումը ԱՄՀ-ից և ՀԲ-ից:

Վերջերս Ռուսաստանի հետ ստորագրված պարտքի վերաձևակերպման պայմանագիրը (94 միլիոն ԱՄՆ դոլարի պարտքը մարվել է 5 պետական ձեռնարկությունների բաժնետոմսերի փոխանցման հաշվին) զգալիորեն նվազեցրել է երկրի պետական պարտքը: Հայաստանի արտաքին պարտքը կազմում է շուրջ 1 միլիարդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 43 տոկոս (որը հիմնականում տրամադրված է ցածր տոկոսադրույքով) և ԱՊՀ ցածր եկամուտ ունեցող այլ 7 երկրների համեմատ ունի ավելի ցածր մակարդակ: Սակայն պարտքի մակարդակը բյուջեյի եկամուտների համեմատ շարունակում է բարձր մնալ (բյուջեյի եկամուտների 200 տոկոս): Անհրաժեշտ է խիստ սահմանափակումներ կիրառել նոր պարտքի կուտակման վրա: Այս նպատակով կառավարությունը համաձայնել է ԱՄՀ-ի հետ չկուտակել ոչ կոնցեսիոն պայմաններով տրամադրվող նոր պետական պարտք:

### 2.2.2. Անցման գործընթացի հաջողությունները և խնդիրները

Անցման փուլում գտնվող տարածաշրջանի այլ երկրների համեմատ Հայաստանը դրական առաջընթաց է արձանագրել զնեթի ազատականացման և կառուցվածքային բարեփոխումների ոլորտում: Այս գնահատականը ներառվում է Բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող անցման գործընթացի գնահատականների հաշվետվության մեջ: Առաջընթացը ավելի նկատելի է ձեռնարկատիրության ոլորտի բարեփոխումների և շուկայի ազատականացման բնագավառում: Այլ ուղղություններով, ինչպիսիք են օրինակ ֆինանսական հաստատությունների կայացումը և որոշ ենթակառուցվածքային փոփոխությունները, անցման գնահատականները դեռևս ՎՋԵԲ-ի միջին ցուցանիշնորից ցածր են, սակայն ավելի բարձր են, քան ԱՊՀ երկրների միջին ցուցանիշը: Այնուամենայնիվ, Հայաստանը անցման գործընթացը ավարտի հասցնելու առումով դեռևս կարևոր անելիքներ ունի:

### ԱՊՀ երկրներում անցման ցուցանիշները, 2003թ.

Երկիր	Փոքր օբյեկտների սեփականաշնորհում	Գների ազատ ակապում	Վրտաքին առևտուր և դրամի փոխարժեք	Խոշոր սեփականաշնորհում	Կառավարում և ձեռնարկությունների վերակազմավորում	Մրցակցության պաշտպանություն	բանկային ռեֆորմներ և ազատ վարկային տոկոսադրույք	կապիտալի շուկա և ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններ	Ենթակառուցվածքի ռեֆորմներ
Հայաստան	4-	4+	4+	3+	2+	2	2+	2	2+
Ադրբեջան	4-	4	4-	2	2+	2	2+	2-	2-
Բելառուս	2+	3-	2+	1	1	2	2-	2	1+
Վրաստան	4	4+	4+	3+	2	2	2+	2-	2+
Ղազախստան	4	4	3+	3	2	2	3	2+	2+
Ղրղստան	4	4+	4+	3	2	2	2+	2	1+
Մոլդովա	3+	4-	4+	3	2-	2	2+	2	2
Ռուսաստան	4	4	3+	3+	2+	2+	2	3-	2+
Տաջիկստան	4-	4-	3+	2+	2-	2-	2-	1	1+
Թուրքմենստան	2	3-	1	1	1	1	1	1	1
Ուկրաինա	4	4	3	3	2	2+	2+	2	2
Ուսբեկստան	3	3-	2-	3-	2-	2-	2-	2	2-
ՎՋԵԲ միջին	4-	4	4-	3	2+	2	3-	2+	2+

## **Ազատականացում, Շուկաներ և Առևտուր**

Հայաստանը ազատականացման բնագավառում կարևոր հաջողությունների է հասել: Գների մեծ մասը լիովին ազատական է, իսկ հասարակական ծառայությունների գները զգալի աճ են ապրել: Հայաստանի առևտրային ռեժիմը ԱՊՀ երկրների ամենաազատ ռեժիմներից մեկն է: Տասնամյա բանակցություններից հետո՝ 2003թ.-ի փետրվար ամսին, երկիրը անդամակցեց ԱՄԿ-ին: ԱՄԿ անդամությունը կնպաստի առևտրի ընդլայնմանը, մասնավորապես Եվրոպական Միության երկրների և ԱՄՆ-ի հետ: 2002 և 2003 թվականի առևտրի վիճակագրությունը արձանագրել է առևտրի ծավալների աճ հիմնականում ԱՊՀ երկրներ չհանդիսացող երկրների հետ: Ազատական առևտրի ռեժիմի առավելությունները սակայն լիովին չեն օգագործվում, քանզի առկա են թերի տրասպորտային ենթակառուցվածքի, մաքսային կանենակարգերի և առևտրային շրջափակման հարցերով պայմանավորված բազմաթիվ խնդիրներ: Այս գործոնները շարունակում են սահմանափակել առևտրի ծավալները Կովկասում:

## **Սեփականաշնորհում և Ձեռնարկությունների Վերակազմավորում**

Առ 2003թ. հուլիս ամիսը կառավարությունը սեփականաշնորհել է 7.178 փոքր օբյեկտ և 1.789 միջին և խոշոր ձեռնարկություններ: Լուծարվել են նաև մի շարք փոքր և միջին ձեռնարկություններ: Արդյունքում ավարտվել է գրեթե բոլոր կարևորագույն ձեռնարկությունների սեփականաշնորհումը: Մասնավոր հատվածի բաժինը երկրի ՀՆԱ-ում 2002թ.-ին համապատասխանաբար աճել է մինչև 70 տոկոս: Վերջին տարիներին սեփականաշնորհման գործընթացը դանդաղել է, քանի որ մնացել են սակավաթիվ գրավիչ ակտիվեր, որոնք քիչ հետաքրքրություն են ներկայացնում ռազմավարական ներդրողների համար: Ներկայիս սեփականաշնորհման ծրագիրը ներառում է գրեթե բոլոր մնացած պետական ձեռնարկությունները և նախատեսում էր ավարտել սեփականաշնորհման գործընթացը 2003թ.-ին: Սակայն գործարար միջավայրի բարդության պատճառով այս ծրագիրը հնարավոր չեղավ իրականացնել: Կառավարությունը այժմ նախատեսում է սեփականաշնորհումն ավարտել 2004թ.-ին: Երկու անհաջող փորձից հետո՝ 2002թ.-ին անգլիական Միդլենդ Ռեսուրսիզ ընկերությանը (օֆշորային, մետաղների առևտրով զբաղվող ընկերություն, որը պատկանում է Ուկրաինացի բաժնետերերին) վաճառվեցին Հայաստանի բաշխիչ էլեկտրացանցերը: Կառավարությունը նաև Արգենտինական ներդրողին 30 տարվա կառավարման հանձնեց Երևանի Ջվարթնոց միջազգային օդանավակայանը: 2003թ.-ին կառավարությունը հաջողությամբ ավարտեց վնասով աշխատող պետական ավիաընկերության վերակազմակերպումը և լուծարումը և նրա ակտիվները վաճառեց երկու մասնավոր օպերատորի: Քանի որ սեփականաշնորհվող օբյեկտների հանդեպ արևմտյան ռազմավարական ներդրողների հետաքրքրությունը փոքր էր, ձեռնարկությունների մեծ մասն իրացվեց ներքին գնորդներին, ԱՊՀ երկրների ներդրողներին կամ սփյուռքի հետ կապված ձեռներեցներին:

## **Գործարար միջավայր**

Հայաստանը գործուն քայլեր է ձեռնարկել գործարար միջավայրի բարելավման նպատակով, սակայն այդ բնագավառում դեռ բազմաթիվ անելիքներ կան:

Ներդրումային միջավայրի մի շարք ուսումնասիրությունները և վերջին տարիների արտահանման աճի տենդենցը վկայում են, որ իրավիճակը դրական զարգացում է ապրել: Մի շարք համապատասխան օրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել, սակայն նրանց արդյունավետությունը հնարավոր է գնահատել միայն գործնական կատարման աստիճանով: Գործարար միջավայրը բարելավելու համար ստեղծվել է գործարարության աջակցման խորհուրդ, որին անդամակցում են տեղական և արտասահմանյան ընկերություններ: Ստեղծվեց հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համակարգ և գործում է հողի երկրորդային շուկա: Ըստ ԱՄՀ-ի, բարձրացել է մաքսային ծառայության արդյունավետությունը, երկրի առևտրային ռեժիմը համապատասխանության բերելով ԱՄԿ-ի պահանջներին: 1999 և 2000թ.-ին ՎՋԵԲ-ի և ՀԲ-ի կողմից անցկացված գործարար միջավայրի և ձեռնարկությունների արդյունավետության ուսումնասիրման համաձայն՝ վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի գործարար միջավայրը դրական զարգացում է ապրել: Կարվորագույն չափորոշիչը “կաշառքի հարկի” մակարդակն է, որը գնահատում է ընկերությունների կողմից վարչական խնդիրների լուծման համար պետական ատյաններին վճարված կաշառքների չափը: 1999թ.-ին Հայաստանում առկա էր արտառոց բարձր վարչական կաշառակերության մակարդակ. ընկերությունները իրենց տարեկան եկամտի 3.75 տոկոսը վճարում էին տարբեր տեսակի կաշառքների տեսքով: Սակայն 2002թ. դրությամբ այս թիվը կազմել է ընդամենը 1 տոկոս:

Չնայած այս դրական փոփոխությանը, գործարար միջավայրը շարունակում է կաշկանդված մնալ վարչարարական համակարգի ոչ թափանցիկ և բարդ գործելակերպի պատճառով (մասնավորապես՝ շեղումը օրենքի գերիշխանության սկզբունքից) ինչպես նաև հարկային դաշտի անհավասար բաշխվածության ներքո (արտահանող ձեռնարկությունների հանդեպ ավելացված արժեքի հարկի անօրինական գանձումներ, երկար և ծանր վարչական ստուգումներ, անօրինական գերավճարների հավաքագրում): Խնդիրը ավելի է բարդանում երկակի հաշվապահական ստանդարտների, թերի ենթակառուցվածքի և ֆինանսական համակարգի թերզարգացվածության պայմաններում: Այս խնդիրները հիմնականում արգելակում են ՓՄՁ զարգացումը: Առկա են բազմաթիվ խնդիրներ հարկային օրենսդրության բնագավառում: Ավելացված արժեքի մասին օրենքը խտրականություն է սահմանում արտահանողների համար, քանի որ ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձը բյուջեից անթույլատրելի երկար ժամանակ է պահանջում: Այժմ փորձ է արվում փոփոխել այդ օրենսդրությունը, սակայն դեռևս անհայտ է այս խնդրի արդյունավետ լուծման ուղին:

Համաշխարհային Բանկի ֆինանսավորման օգնությամբ իրականացվում է հակակոռուպցիոն ծրագիր, որը կոորդինացվում է միջազգային դոնորների հետ: Ծրագիրը ընդունվել է կառավարության կողմից 2003թ.-ին, երկու տարվա նախապատրաստական աշխատանքից հետո:

### **Ֆինանսական հատված**

ՀՀ Կենտրոնական Բանկը շարունակում է բանկային կարգավորման ամրապնդումը և բանկային հատվածի կոնսոլիդացիայի խթանումը՝ ոլարտի հանդեպ հասարակական վստահության հետագա ամրապնդման նպատակով: Բոլոր բանկերը այժմ մասնավոր սեփականություն են: Բանկերի մինիմալ կապիտալի

պահանջը 2003թ. հւլիսին կազմել է 2 միլիոն ԱՄՆ դոլարի համարժեք դրամ և նախատեսվում է ավելացնել մինչև 5 միլիոն ԱՄՆ դոլարի համարժեք դրամ 2005թ.-ին: ԱՄՆ 5 միլիոն դոլարի համարժեք դրամ մինիմալ կապիտալի մակարդակը արդեն իսկ գործում է նոր ստեղծված բանկերի համար: Այժմ երկրում գործում է 20 բանկ: 2002թ.-ին և 2003թ.-ի առաջի կիսամյակի ընթացքում Կենտրոնական Բանկի պահանջով լուծարվել կամ վարկային կազմակերպությունների են վերակազմավորվել Կենտրոնական Բանկի խնամակալության տակ գտնվող 8 բանկերից 6-ը: 2003թ.-ին Կենտրոնական Բանկի կողմից հիմնադրվեց ավանդների ապահովագրման համակարգ, որը կգործի 2005թ.-ից, ինչպես նաև անօրինականորեն ձեռք բերված դրամական միջոցների շրջանառության արգելակման հանձնաժողով: Քաղաքացիական օրենսգրքի մի շարք փոփոխություններ ուղղված էին վարկատուների գրավի նկատմամբ իրավունքների պաշտպանության ամրապնդմանը: Բանկային ոլորտի ընթացիկ ցուցանիշները հուսադրող են՝ արձանագրվել է ակտիվների և կապիտալի աճ, բարելավվել են ակտիվների որակը, իրացվելիության և շահութաբերության ցուցանիշները: Շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտների աճը իր հերթին ավելացրել է պահանջարկը ՓՄՁ վարկային ֆինանսավորման և բանկային վարկավորման հանդեպ: Սակայն, առևտրային բանկերը դեռևս չեն կարողանում ապահովել լիարժեք ֆինանսական միջնորդություն և ձեռնարկությունների վարկավորման ծավալները շարունակում են սահմանափակ մնալ: Բանկերը այս իրավիճակը բացատրում են լավ հիմնավորված ծրագրերի սակավությամբ, անհրաժեշտ գրավի բացակայությամբ և գործարարների գործունեության թափանցիկության ցածր մակարդակով: Բանկային համակարգը շարունակում է թույլ և ցածր կապիտալիզացված մնալ իսկ բանկային ակտիվների համախառն ծավալը չի գերազանցում ՀՆԱ 15 տոկոսը: Տեղական համախառն վարկավորման ծավալը ՀՆԱ հարաբերակցությամբ կազմում է 10 տոկոս, ԱՊՀ միջինացված 22.6 տոկոս ցուցանիշի համեմատ:

Կապիտալի շուկան գտնվում է սաղմնային վիճակում: Ստեղծվել է Հայաստանի Ֆոնդային Բորսան (ՀՖԲ) որը հանդիսանում է ինքնակառավարվող կառույց և կարգավորվում է արժեթղթերի շուկայի անկախ հանձնաժողովի կողմից: Բորսայում գրանցված է 171 ընկերություն, սակայն առևտրի ծավալները շարունակում են չնչին մնալ: Շուկայի ընդհանուր կապիտալիզացիան 2003թ. դրությամբ չէր գերազանցում 25 միլիոն ԱՄՆ դոլարը (ՀՆԱ 1 տոկոս): Արժեթղթերի շուկայում հիմնականում վաճառվում են միջին և կարճ ժամկետայնության պետական պարտատոմսերը և մուրհակներ: Այս արժեթղթերը ուղղակիորեն իրացվում են դիլերներին Կենտրոնական Բանկի պարբերական աճուրդների միջոցով:

### **Ենթակառուցվածք**

Վերջին մի քանի տարիների ընթացքում զգալի ձեռքբերումներ են արձանագրվել: Էներգետիկայի ոլորտում 2002թ.-ին մասնավորեցվել են բաշխիչ էլեկտացանցերը և Հրազդանի ՊՇԷԿ-ը (բացառությամբ ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորված և դեռևս անավարտ 5-րդ փուլի) որը փոխանցվել է Ռուսական ՌԱՌ-ԵԷՍ ընկերությանը 2003թ.-ին պետական պարտքի դիմաց: Կառավարությունը կոնցեսիոն պայմանագիր կնքեց Արգենտինական Կորպորասիոն Ամերիկա ընկերության հետ, որի համաձայն Երևանի Զվարթնոց միջազգային օդանավակայանի կառավարումը 30 տարով հանձնվել է մասնավոր կառավարման՝ 8 տարվա ընթացքում 59 միլիոն ԱՄՆ դոլար

ներդրում կատարելու պայմանով: Կառավարությունը շարունակեց բարեփոխումները ջրամատակարարման ոլորտում, ներելով նախկին պարտքերը և նպատակ ունենալով ավելացնել վճարների հավաքագրման ծավալները և բարելավել ոլորտի ֆինանսական վիճակը:

Էներգաարդյունավետության բարձրացման և վճարների հավաքագրման արդյունավետության բարձրացման (81-ից՝ 90 տոկոս) շնորհիվ Էներգետիկ ոլորտի տարեկան դեֆիցիտի մակարդակը նվազել է 2001թ.-ի ՀՆԱ 2.5 տոկոսից և 2002թ.-ին կազմել է 0.4 տոկոս: Էլեկտրոէներգիայի գինը Հայաստանում արդեն իսկ բարձր է, քան ԱՊՀ մյուս երկրներում և 2004թ.-ին նախատեսվում է սակագնի աճ մեկ կիլովատի համար ներկայիս 25 դրամ (4.2 ԱՄՆ ցենտ) մակարդակից մինչև 30 դրամ (4.9 ԱՄՆ ցենտ): Ակնկալվում է, որ բաշխիչ ընկերությունների և Սեվան-Հրազդան հիդրոկայանների կասկադի սեփականաշնորհումը կնպաստի արդյունավետության աճին: Փորձ կարվի ապահովել էլեկտրաէներգիա արտադրողների և բաշխիչ ընկերության հարաբերությունները ուղղակի հիմքերի վրա, իսկ համակարգի վճարումները միջնորդող Հայէներգո պետական ձեռնարկության դերը աստիճանաբար կնվազի: Արդեն Հայէներգո-ից առանձնացել է դիսպեչերային կենտրոնը, որը գործում է որպես անկախ կառույց: Համակարգում սակայն շարունակում են բարձր մնալ տեխնիկական և այլ կորուստները, որոնց ընդհանուր մակարդակը կազմում է արտադրված էլեկտրոէներգիայի շուրջ 26 տոկոս:

Ռուսական ՌԱՌ-ԵԷՍ ընկերությունը այժմ իր վրա է վերցրել Սեծամորի ատոմակայանի ֆինանսական կառավարումը և Ռուսաստանից մատակարարվող միջուկային վառելիքի դիմաց վճարների հավաքագրման գործընթացը (հին պարտքերը մնում են որպես պետական պարտք): Ատոմակայանի ապագան և նրա փակման տարեթիվը առայժմ անհայտ է մնում:

Սեփականաշնորհումից հետո ձեռնարկությունների արդյունավետությունը ոչ բոլոր դեպքերում է բավարար գնահատվել: Գործարարները զանգատվում են հեռահաղորդակցման ցանցերի, ինտերնետի և բջջային կապի ծառայության ցածր որակից: Կառավարությունը ջանքեր է գործադրում շուկայի ազատականացման ուղղությամբ և փորձում է վերացնել Արմենտելի մենաշնորհը, որը պատկանում է հունական OSt պետական ընկերությանը:

Չնայած զգալի նվաճումներ են արձանագրվել ավիացիայի ոլորտում, տրանսպորտի ոլարտը (մասնավորապես ճանապարհները և երկաթգիծը) համեմատաբար թերզարգացած է և մեծ ներդրումների կարիք ունի: Հայկական Ավիաուղիներ ընկերության վերջերս իրականացված լուծարման և վերակազմավորման գործընթացը նպաստել է ոլորտում մրցակցության աճին և երկու տեղական մասնավոր ավիափոխադրող ընկերությունների կայացմանը (Հայկական Միջազգային Ավիաուղիներ և Ավիասերվիս): Պետական երկաթգծային բեռնափոխադրումներ իրականացնող ձեռնարկությունը 2002թ.-ին առաջին անգամ շահութաբեր է դարձել: հաշվի առնելով պետական երաշխիքների տրամադրման սահմանափակումները, կառավարությունը պետք է համագործակցի մասնավոր հատվածի հետ և շարունաի ոլորտի առևտրականացումը՝ նրա ֆինանսական կայունությունը ապահովելու նպատակով:

### **2.2.3 Անցման գործընթացի հետ կապված խնդիրները**

Հայաստանում ռազմավարության ժամանակաշրջանի համար առանձնացվել են հետևյալ հինգ խնդրահարույց ոլորտները.

#### **Գործարարության միջավայրի բարելավում**

Վերջին տարիներին դրական փոփոխություններ են արձանագրվել, սակայն գործարարները շարունակում են գանգատվել բիզնեսը խոչընդոտող մի շարք հանգամանքներից: Հետագա բարեփոխումների կարիք կա ինչպես պետության կարգավորիչ դերի հստակեցման (պետական ստուգումների հստակեցում, անհավասար հարկային դաշտի վերացում, երկարատև հարկային ստուգումների պարզեցում, արտահանողներին ավելացված արժեքի հարկի վերադարձի արդյունավետության բարձրացում), այնպես էլ օրենսդրական և իրավական դաշտի պարզեցման, դատարանների անկախության և անաչառության և կաշառակերության նվազեցման ուղղությամբ:

#### **Ֆինանսական միջնորդության արդյունավետության բարձրացում**

Ձեռնարկություններին և ՓՄՁ-ներին երկարաժամկետ ֆինանսավորմամբ ապահովելու համար հարկավոր է ֆինանսական հատվածի հետագա զարգացում և իրական հատվածի վարկավորման խորացում: Հարկավոր է շարունակել կապիտալիզացիայի աճի և կոնսոլիդացիայի խթանումը: Գրավի հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է հստակեցնել և ուժեղացնել գրավային ակտիվների նկատմամբ վարկատուների իրավունքների կառավարման գործընթացը:

#### **Պետական ենթակառուցվածքի առևտրականացում**

Լրացուցիչ ջանքեր են հարկավոր ենթակառուցվածքային ձեռնարկությունների առևտրականացման և սեփականաշնորհման, ինչպես նաև համապատասխան կարգավորիչ կառույցների ստեղծման բնագավառում: Այս առումով կարևոր սկիզբ հանդիսացավ էներգետիկայի ոլորտի շարունակվող բարեփոխումները և տրասպորտի ոլորտի վերջերս տեղի ունեցած ապապետականացումը: Այս բարեփոխումները անհրաժեշտ է ամրապնդել սակագների հետագա վերանայման և վճարների հավաքագրման համակարգերի արդյունավետության բարձրացման միջոցով:

#### **Սեփականաշնորհման ավարտում և ձեռնարկությունների վերակազմավորման արագացում**

Անհրաժեշտ է անհապաղ ավարտել սեփականաշնորհումը: Առաջնահերթ խնդիրներից է դեռևս պետական սեփականության տակ գտնվող խոշոր ձեռնարկությունների մասնավորեցումը, մասնավորապես հանքարդյունահանման ոլորտում: Արդեն սեփականաշնորհած ձեռնարկություններից շատերը գտնվում են ծանր գործառնական և ֆինանսական իրավիճակում: Հետևաբար կարևոր է սեփականաշնորհման ավարտից հետո ձեռնարկությունների վերակազմավորման շարունակումը և նրանց արդյունավետության, արտադրանքի որակի և կառավարման մակարդակի բարձրացման նպատակով ներդրումների ապահովումը: Այս առումով չափազանց կարևոր է ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավումը և ռազմավարական ներդրողների մուտքը: Տնտեսապես



անարդյունավետ ձեռնարկությունների համար հարկավոր է արագացնել և հստակեցնել լուծարման գործընթացը:

### **Պարտքի վճարունակության ապահովումը**

Մակրոտնտեսական կայունության և պարտքի վճարունակության ապահովման նպատակով կառավարությունը պետք է շարունակի զուսպ դրամավարկային քաղաքականությունը, հարկային կշռադատված քաղաքականությունը և Համաշխարհային Բանկի ու ԱՄՀ-ի միջոցների ներգրավումը: Այս առումով կարևոր է ապահովել պետական ներդրումների բաշխումն ըստ գերակայությունների՝ միաժամանակ ապահովելով նրանց տնտեսական ու ֆինանսական արդյունավետությունը և հարկերի արդյունավետ հավաքագրումը:

## **2.3 Կապիտալի հասանելիությունը և ներդրումային պահանջները**

Հայաստանը դեռևս լուրջ ներդրումների կարիք ունի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում: Կապիտալի հասանելիությունը, սակայն, բացառությամբ արտաքին ռեսուրսների, շարունակում է սահմանափակ մնալ: Հայաստանը շարունակում է մեծապես կախված մեջ մնալ դոնոր երկրներից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից, սփյուռքից և միջպետական ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցներից: Երկիրը տարեկան ստանում է շուրջ 200 միլիոն ԱՄՆ դոլարի արտաքին ֆինանսավորում: Խոշորագույն միջպետական դոնորներն են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Եվրոմիությունը և Ճապոնիան: Նախատեսվում է շարունակել միջազգային ֆինանսական կազմակերպությունների հաշվին իրականացվելիք ծրագրերը՝ կառուցվածքային բարեփոխումների հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման նպատակով: Վերջերս զարգացել է պետության կողմից տեղական շուկայում պարտքի ներգրավման համակարգը, սակայն տեղական շուկան դեռևս ապահովում է ընդհանուր պետական պարտքի չնչին մասը: Կառավարությունը 2002թ. դեկտեմբեր ամսին հաջողությամբ թողարկել և տեղաբաշխել է 5 տարի մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսեր:

Հայաստանը դեռևս ռեյտինգավորված չէ միջազգային ճանաչում ունեցող ռեյտինգավորող գործակալությունների կողմից և Հայաստանի կառավարությունը ու մասնավոր ընկերությունները հնարավորություն չունեն կապիտալ կամ վարկային միջոցներ ներգրավել միջազգային ֆոնդային շուկաներում: Մասնավոր ֆինանսավորման գերակշիռ մասը ստացվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով: Վերջին տարիներին օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ տարեկան ծավալները կազմել են շուրջ 100 միլիոն ԱՄՆ դոլար: Մինչ այսօր կատարվել են մի շարք ինչպես առավել հաջող (Էյջ-Էս-Բի-Սի բանկ, Պեռնո-Ռիկառ, Մարիոտ-Արմենիա հյուրանոց), այնպես էլ ոչ այնքան հաջող (Արմենտել, Նաիրիտ) օտարերկրյա ներդրումներ:

Տեղական շուկայում մասնավոր հատվածի կողմից միջին և երկար ժամկետայնության ֆինանսավորման ստացման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Ընդհանուր վարկավորման ծավալը տեղական շուկայում նվազել է 2000թ.-ին արձանագրված ՀՆԱ 13 տոկոս մակարդակից և 2002թ.-ին կազմել է ՀՆԱ 9.8 տոկոս: Բանկային ոլորտը շարունակում է թերզարգացած մնալ և ֆինանսական

միջնորդության ծավալները բավարար չեն: Չնայած վարկային տոկոսադրույքները վերջին երկու տարիների ընթացքում զգալիորեն նվազել են, նրանց մակարդակը մնում է 20%-ից բարձր իսկ ժամկետայնությունը միջինում չի գերազանցում մեկ տարին: Բանկային վարկավորման հասանելիությունը սահմանափակ է մասնավորապես ՓՄՁ ոլորտի համար, քանզի առկա են գրավային պահանջների բավարարման և տոկոսադրույքների բարձր մակարդակի հետ կապված դժվարություններ: Տեղական կապիտալի շուկան դեռևս զարգացման սկզբնական փուլում է: Առևտուրը հիմնականում վարվում է կարճաժամկետ պետական պարտատոմսերի և մուրհակների շուկայում: Շուկայի կապիտալիզացիան չի գերազանցում ՀՆԱ 1 տոկոսը:

### ***3. ՈԱԶՄԱՎԱՐՈՎԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

Առաջնորդվելով իր փորձառությամբ և մանդատով՝ Բանկը ռազմավարության ժամանակաշրջանում իր գործունեության հիմնական ուղղվածությունն է համարում մասնավոր հատվածի զարգացումը: Բանկի մասնակցությունը Աղքատության Նվազեցման Ռազմավարական Ծրագրին կիրազորվի մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված ծրագրերի կատարման միջոցով, հաշվի առնելով այն փաստը, որ մասնավոր տնտեսության կայուն աճը հանդիսանում է աղքատության նվազեցման կարևորագույն նախապայմաններից մեկը: Հաշվի առնելով Հայաստանի ներկայիս արտաքին պարտքի չափերը՝ Բանկը չի նախատեսում պետական երաշխիքների հիմքի վրա նոր ենթակառուցվածքային ծրագրեր ֆինանսավորել՝ առանց համապատասխան դրամաշնորհային միջոցների ներգրավման:

Բանկի ծրագրերի զարգացումը և կատարված ներդրումների որակի արդյունավետությունը կախված է երկրում առկա ներդրումային միջավայրից: Բանկը կշարունակի համագործակցել միջազգային այլ ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև կառավարության հետ՝ գործարար միջավայրի և իրավական դաշտի բարելավման ուղղությամբ:

Սույն ռազմավարությունը չի վերաբերվում Լեռնային Ղարաբաղին, որի կարգավիճակի շուրջ բանակցային գործընթացը դեռևս շարունակվում է:

#### **3.1 Ռազմավարության ժամանակաշրջանում Բանկի Գործունեության Գերակայությունները**

Բանկի հիմնական գործառնական նպատակները հետևյալներն են.

- **Ձեռնարկությունների մակարդակ.** Բանկը կշարունակի ընդլայնել ՓՄՁ և միկրո-ձեռնարկությունների ֆինանսավորման իր ծրագրերը: Ֆինանսավորումը հիմնականում կտրամադրվի տեղական գործընկեր բանկերի հետ իրականացվող վարկային գծերի ծրագրերով, ինչպես նաև Բանկի Ուղղակի Ներդրումների Հիմնադրամի (ՈԻՆՀ) հաշվին կատարվող ուղղակի բաժնետիրական ներդրումների միջոցով: Տեղական գործընկեր բանկերի միջոցով համատեղ ռիսկի համաֆինանսավորման ծրագրեր ևս կիրականացվեն: Վերջերս գործարկված Մենեջմենթի Փորձագիտության

ծրագիրը (ՄՓԾ) և Բիզնես Աջակցության Ծրագիրը (ԲԱԾ) ևս կընդլայնվեն: Բանկը պատրաստ է տրամադրել իր աջակցությունը ֆինանսական գործարքների ապահովման, անվճարունակության գործընթացի հստակեցման և հեռահաղորդակցության հատվածի բարելավման իրավա-օրենսդրական դաշտի զարգացման ուղղությամբ:

- **Ֆինանսական հատված.** ՎՋԵԲ-ը կշարունակի նոր տեղական բանկեր ներգրավել ՓՄՁ վարկային գծերի ծրագրով և կընդլայնի իր Առևտրի Խթանման Ծրագիրը (ԱԽԾ), նպատակ ունենալով նպաստել երկրում ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացմանը: Ելնելով երկրում գործող բանկերի համար սահմանված միմիմալ կապիտալի պահանջներից, Բանկը կշարունակի բաժնետիրական ներդրումների հնարավորություններ փնտրել հայկական առևտրային բանկերում: Ֆինանսական հատվածի կոնսոլիդացիայի գործընթացն աջակցելու նպատակով կքննարկվեն առևտրային բանկերի հնարավոր կլանումների և միաձուլումների համար տրամադրվող աջակցության հնարավորությունները: Փորձ կարվի հապատասխան միջոցներ տրամադրել ներկայումս աճ ապրող հիպոթեկային վարկավորման շուկայի և ոչ բանկային վարկային կազմակերպությունների խթանման համար:
- **Ընթացիկ ծրագրերի մոնիտորինգ և իրականացման ապահովում.** Հաշվի առնելով Բանկի կողմից անցյալում իրականացված պետական հատվածի ծրագրերի հետ կապված խնդիրները՝ (Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկ և Ջվարթնոց օդանավակայանի բեռնահամալիր) հատուկ ուշադրություն կդարձվի ծրագրերի մոնիտորինգին, որպեսզի լուծում տրվի ներկայիս խնդիրներին և ապահովվի այս ծրագրերի հետագա զարգացումը:
- **Ենթակառուցվածք և պետական սեփականություն հանդիսացող սպասարկման ձեռնարկություններ.** Բանկը փորձ կկատարի ներդրումային հնարավորություններ գտնել պետական և մարզային սեփականություն հանդիսացող հասարակական սպասարկման և ենթակառուցվածքային ձեռնարկություններում, առանց ապավինելու պետական երաշխիքների վրա: Այս ներդրումները կիրագործվեն համապատասխան կառուցվածքային կամ ինստիտուցիոնալ ռեֆորմների իրականացման պայմանով:

Բանկը Հայաստանում ծրագրեր իրականացնելիս կշարունակի առաջնորդվել շրջակա միջավայրի պահպանման կանոնակարգերով և անհրաժեշտության դեպքում կմշակի նաև շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների նախագծեր:

Հայաստանում վերջերս լուրջ դրական առաջընթաց է արձանագրվել մի շարք կառուցվածքային բարեփոխումների բնագավառում: Բանկը կփորձի օգտագործել այս բարեփոխումների ներքո ընձեռած հնարավորությունները և ընդլայնել իր ծրագրերը Հայաստանում:

Հայաստանում ծրագրերի իրականացման ընթացքում Բանկը կարիք կունենա օգտվելու տեխնիկական աջակցման հիմնադրամներից և կոնցեսիոն պայմաններով տրամադրվող միջոցներից՝ ներկայիս խնդիրների և հնարավորությունների

պարագայում հետագա գործունեության ծավալման համար: Անցման սկզբնական փուլում գտնվող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, հատկապես կարևոր դեր ունեն տեխնիկական աջակցման ռեսուրսները, քանի որ Բանկը լրացուցիչ աշխատանք պետք է կատարի ծրագրերի որոնման, նախապատրաստման և իրականացման վրա, ինչպես նաև ինտիտուտների զարգացման և քաղաքական երկխոսության շարունակության ուղղությամբ: Ֆինանսավորման ոչ ավանդական միջոցներ են անհրաժեշտ ներդրումները դրամաշնորհային համաֆինանսավորմամբ համալրելու, ռիսկի նվազեցման մեխանիզմների օգտագործման, վճարունակության ապահովման և մատչելիության ապահովման համար: Այսպիսի միջոցների տրամադրումից մեծապես կախված է Բանկի կողմից իր ծրագրերի և գործունեության ընդլայնման զարգացումը և այդ ծրագրերի ազդեցության ապահովման մակարդակը: Կարևոր է նաև այս միջոցների հնարավոր ծավալների և ուղղությունների նախագծումը: Ներկայումս Բանկը վերանայում է իր գործիքակազմը և կարողությունները, որպեսզի տնտեսական անցման սկզբնական փուլում գտնվող երկրներում ապահովի իր ծրագրերի և գործունեության արդյունավետության ավելի բարձր մակարդակ: Այս ծրագրերը նաև իրենց կիրառությունը կգտնեն Հայաստանում: Այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսին օրինակ էներգետիկ համակարգի զարգացումն է, Բանկը կհամագործակցի նաև այլ միջազգային և միջպետական կազմակերպությունների հետ:

Հարկ է նշել, որ հետագա ծրագրերի միջին չափը շարունակելու է փոքր մնալ, սակայն լրացուցիչ ջանքեր են գործադրվելու խոշոր ծրագրեր հայտնաբերելու համար: Ծրագրերի չափի փոքրությունը սակայն չի սահմանափակի Բանկի գործունեությունը Հայաստանում: Այս ռազմավարությունը համահունչ է անցման սկզբնական փուլում գտնվող երկրներում Բանկի կողմից ծրագրերի իրականացման ընդհանուր սկզբունքներին: Հատուկ ուշադրություն է դարձվելու ծրագրերի քանակին և նրանց տնտեսական կարևորությանը:

## **3.2. Ճյուղային Գերակայությունները և Նպատակները**

### **3.2.1. Զեռնարկությունների հատված**

Բանկը կշարունակի իր ծրագրերը մասնավոր ձեռնարկություններին ուղղակի և անուղղակի աջակցության ցուցաբերման ուղղությամբ: Հաշվի առնելով ՓՄՁ և միկրոձեռնարկությունների նշանակությունը որպես Հայաստանի երկարատև և կայուն զարգացման ապահովման գործոն՝ Բանկը ընդլայնելու է իր ֆինանսական ծրագրերը այս բանագավառում: Ծրագրերի ընդլայնման հանարավորությունների առումով մասնավորապես կդիտարկվեն գյուղատնտեսության, տուրիզմի, շինանյութերի արտադրության, թեթև արդյունաբերության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտները: Բանկը հատուկ ուշադրություն կհատկացնի գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը՝ ինչպես տեղական գործընկեր բանկերի հետ համատեղ իրականացվող վարկային գծերի, այնպես էլ այդ ոլորտին ուղղված հատուկ տեխնիկական աջակցման ծրագրերի միջոցով: Հնարավոր է նոր ներդրումային հնարավորությունների ուսումնասիրումը լեռնահանքային ոլորտում, եթե համապատասխան թափանցիկությամբ և վստահելի ռազմավարական ներդրողների մասնակցությամբ իրականացվի գունավոր մետաղներ պարունակող որոշ կարևոր հանքահումքային ձեռնարկությունների մասնավորեցումը:

Բակը կաշխատի ինչպես տեղացի, այնպես էլ ռազմավարական օտարերկրյա ներդրողներ ունեցող և համատեղ ձեռնարկությունների հետ, որոնց միջոցով պետք է ապահովվեն ոչ միայն օտարերկրյա ուղղակի ներդրումները, այլ նաև կարևորագույն մասնագիտական գիտելիքների, փորձի և կարողությունների ստացումը:

Մասնավորապես Բանկը իր ուշադրությունը կսևեռի հետևյալ ուղղությունների վրա.

- Համագործակցություն տեղական բանկերի և ֆինանսական միջնորդ կազմակերպությունների հետ՝ ՓՄՁ և միկրոձեռնարկություններին վարկային գծերի և ֆինանսավորման նոր ձևերի (օրինակ՝ լիզինգ) տրամադրման գործում: Հատուկ ուշադրություն կդարձվի միկրոֆինանսավորման զարգացմանը՝ միկրոֆինանսավորմամբ զբաղվող տեղական բանկերի միջոցով:
- Բաժնետիրական ներդրումներ տեղական ՓՄՁ-երում Ուղղակի Ներդրումների Հիմնադրամի (ՈԻՆՀ) միջոցով: Այն պետք է համագործակցի տեղական գործընկեր բանկերի, ինչպես նաև Մենեջմենթի Փորձագիտության ծրագրի հետ՝ ապագա ներդրումային հնարավորություններ գտնելու համար:
- Համագործակցություն տեղական ֆինանսական միջնորդ կառույցների հետ՝ մասնավոր միջին ձեռնարկություններին երկարաժամկետ ֆինանսավորման և համատեղ ռիսկի նվազեցման ծրագրերի ապահովման ուղղությամբ:
- Առևտրային գործարքների ֆինանսավորում՝ Առևտրի Խթանման Ծրագրի միջոցով:
- Տեղական մասնավոր և համատեղ ձեռնարկությունների ուղղակի ֆինանսավորման ապահովում՝ ինչպես սեփականաշնորհման, այնպես էլ վերակազմավորման փուլն ավարտելու և ներդրումների ապահովման նպատակով: Այս ուղղությունը կընդգրկի Բանկի մասնակցությունը ենթակառուցվածքային ձեռնարկությունների սեփականաշնորհման ծրագրերին, ինչպես նաև մասնավորեցման տարբեր ձևերի (օրինակ՝ կոնցեսիա) զարգացմանը: Բանկի մասնակցությունը կարող է ներառել նաև համապատասխան տեխնիկական աջակցման ծրագրեր, որոնք նախորոք կհամաձայնեցվեն կառավարության հետ:
- Մասնավոր ձեռնարկություններին տրամադրվող խորհրդատվական ծրագրերի ընդլայնում՝ ինչպես Մենեջմենթի Փորձագիտության ծրագրով, այնպես էլ վերջերս հիմնադրված Բիզնեսի Աջակցման Ծառայության միջոցով:

Գործարար միջավայրի բարելավումն ապահովելու նպատակով Բանկը կհամագործակցի այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դոնորների հետ, ինչպես նաև կնախաձեռնի օրենսդրական և իրավական դաշտի բարելավման ծրագրեր (օրինակ՝ գրավային և այլ ապահովմամբ գործարքների վերաբերյալ օրենսդրություն, անվճարունակության օրենսդրության բարելավում, հեռահաղորդակցման ոլորտի կանոնակարգման և բարեփոխումների ծրագրեր):

### 3.2.2. Ֆինանսական Հատված

Բանկը կշարունակի լավագույն տեղական բանկերին ֆինանսական աջակցություն տրամադրել՝ առաջնային պարտքի և ընտրանքային հիմքով նաև բաժնետիրական մասնակցության ծրագրերի ներքո, նպատակ ունենալով ամրապնդել բանկային

հատվածը և ֆինանսական միջնորդությունը: Բանկը ավելի ակտիվ դեր կունենա ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների զարգացման գործում, ինչպիսիք են օրինակ լիզինգային կամ հիպոթեկային վարկավորման կազմակերպությունները, եթե դրա համար ստեղծվեն համապատասխան շուկայական պայմաններ: Բանկի գործառնական նպատակներն են.

- Առկա վարկային գծերի ծրագրերի ընդլայնում և նոր ծրագրերի որոնում՝ Հայաստանի Բանկերի Ֆինանսավորման Հիմնադրամի շրջանակներում տեղական բանկերի հետ համատեղ ՓՄՁ և միկրոձեռնարկությունների վարկավորման նպատակով:
- Գործընկեր բանկերի որոշ հաճախորդների երկարաժամկետ վարկային պահանջների ապահովում՝ ռիսկի նվազեցման և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման ծրագրերի իրականացմամբ, խթանելով տեղական բանկերի ներթափանցումը այս տեսակի ֆինանսավորման գործարքների շուկա:
- Ընտրանքային հիմքով կկատարվեն բաժնետիրական ներդրումներ տեղական բանկերում՝ բանկային հատվածի կոնսոլիդացիայի (միաձուլումներ և կլանումներ) գործընթացը խթանելու նպատակով:
- Լիզինգի, հիպոթեկային վարկավորման և այլ ֆինանսական ծառայությունների զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնել, որոնք կզուգորդվեն համապատասխան տեխնիկական աջակցության և իրավական դաշտի ու ինստիտուցիոնալ կառույցների զարգացման ծրագրերով՝ այս առումով համագործակցելով վստահելի և լուրջ ներդրողների հետ:
- Բանկը կշարունակի իր համագործակցությունը տեղական ֆինանսական հաստատությունների հետ՝ գործարար միջավայրի բարելավման և ֆինանսական հատվածի զարգացման նպատակով, ինչպես նաև իր աջակցությունը կառավարության և ՀՀ Կենտրոնական Բանկի հետ համատեղ իրականացվող ծրագրերին:

### **3.2.3 Պետական սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքային և հասարակական սպասարկման ձեռնարկություններ**

#### **Էներգետիկա**

Բանկը 1993թ.-ին Հայաստանում ստորագրել է Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկի շինարարության ծրագիր, որը ապահովված է պետական երաշխիքով: Սակայն ծրագրային միջոցների գերաժախսի պատճառով նախատեսված աշխատանքները չհաջողվեց ավարտի հասցնել: Կայանը շարունակում է անավարտ մնալ, իսկ վարկի սպասարկումը իրականացնում է ՀՀ կառավարությունը: Հրազդանի ՊՇԷԿ-ի մնացած մասը ՀՀ պետական պարտքի դիմաց վերջերս փոխանցվել է Ռուսական ՌԱՌ-ԵԷՍ ընկերությանը, որը նաև պահպանում է 5-րդ բլոկի ձեռք բերման իրավունքը: Բանկը շարունակում է դրամաշնորհային միջոցներ փնտրել այս բլոկի կոստրվացիոն աշխատանքները շարունակելու համար՝ ֆինանսավորման առկայության դեպքում կառույցն ավարտի հասցնելու նպատակով: 2001թ.-ին Բանկը համաձայնություն տվեց բաժնետիրական ներդրում կատարել Հայաստանի բաշխիչ էլեկտրացանցերի մասնավորեցման ծրագրի համար, այն պայմանով, որ մասնավորեցումն իրականացվի Բանկի կողմից ընդունելի ռազմավարական ներդրողին: Մրցույթի արդյունքում հաղթող հայտարարված Միդլենդ Ռեսուրսիզ ընկերությունը, սակայն, Բանկի կողմից ընդունելի չճանաչվեց էներգետիկայի բնագավառում անհրաժեշտ

փորձի բացակայության պատճառով, որի արդյունքում ծրագիրը կասեցվեց: Այնուհանդերձ, Միդլենդ Ռեսուրսիզ ընկերությունը այժմ հաջողությամբ կառավարում է բաշխիչ էլեկտրացանցերի համակարգը և ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության կողմից տեխնիկական աջակցություն է ստանում: Ընկերության գործունեությունը վերահսկվում է Համաշխարհային Բանկի կողմից:

Ոլորտում հետագա գործունեության առումով Բանկը նախատեսել է հետևյալը.

- Շարունակել հետևել Հրազդանի ՊՇԷԿ-ի ծրագրի հետագա զարգացումներին և 5-րդ բլոկին առնչվող հնարավոր ծրագրերին՝ որպես Մեծամորի ատոմակայանի փակման նախագծի փուլային իրականացման մաս:
- Սերտորեն համագործակցել միջազգային այլ դոնոր և երկկողմ կազմակերպությունների հետ՝ վերականգնվող ռեսուրսների հիմքի վրա էլեկտրոէներգիայի արտադրման ծրագրերի աջակցման նպատակով: Հայաստանում առկա է մասնավոր փոքր հիդրոկայանների կառուցման և քանու ուժի հաշվին էլեկտրական էներգիայի ստացման լուրջ պոտենցիալ և Բանկը ներկայումս ուսումնասիրում է այդ ոլորտում փոքր ծրագրերի ֆինանսավորման նպատակով վարկային հիմնադրամի ստեղծման ծրագրի հնարավորությունը: Բանկը նաև համագործակցում է ոլորտի կարգավորումը իրականացնող պետական կառույցի հետ՝ վերականգնվող էներգետիկայի համար համապատասխան սակագնային մեթոդոլոգիայի մշակման հարցում:
- Շարունակել վերջերս սեփականաշնորհված բաշխիչ էլեկտրացանցերի գործունեության ուսումնասիրումը՝ հնարավոր ներդրումային ծրագրերի ֆինանսավորման հարցի քննարկման նպատակով:
- Դիտարկել խոշոր էներգետիկ (նաև այլընտրանքային ռեսուրսների հիման վրա ստացվող) ծրագրերի ուղղակի ֆինանսավորման հնարավորությունը, եթե այդպիսի ծրագրերը համապատասխանեն մրցունակության պահանջներին: Առկա են նաև մի շարք այլ խոշոր ծրագրեր վերականգնվող էներգետիկայի բնագավառում (օրինակ՝ քանու էներգիայի օգտագործում), որոնց ֆինանսավորումը Բանկը կարող է իրականացնել տնտեսապես արդյունավետ և ընդունելի սակագնային քաղաքականության պայմաններում:
- Օգտագործելով համանման ծրագրերի իրականացման արդյունքում կուտակված փորձը՝ համագործակցել Եվրոպական Հանձնաժողովի և այլ դոնորների հետ Մեծամորի ատոմակայանի կանգնեցման աշխատանքների նպատակով հիմնադրամի ստեղծման աշխատանքներում:

## Տրանսպորտ

Հնարավոր է Բանկի ֆինանսավորման տրամադրումը երկաթգծի համակարգի ներդրումային կարիքների համար, որի հիմնական ուղղությունը կլինի շարժական մեքենաների և սարքավորումների արդիականացումը և վերազինումը: Բանկի ներդրման իրականացումը նպատակ ունի պայմաններ ստեղծել երկաթգծային փոխադրումների ոլորտի գործունեությունը շուկայական սկզբունքների վերածելու, ինտիտուցիոնալ զարգացումն ապահովելու և միջազգային առևտուրը խթանելու համար:

Անկախությունից առաջ Հայաստանի երկաթգծը շահագործում էր 796 կմ. երկարությամբ համակարգ, որը ներառում էլ տրանսպորտային հանգույցներ

Երևանից դեպի Թուրքիա, Պարսկաստան, Ադրբեջան և Վրաստան: Ռազմական կոնֆլիկտի արդյունքում այժմ օգտագործվում է միայն Երևանը Թբիլիսիի հետ կապող 350 կմ. երկարությամբ հատված, որը կապող օղակ է Տրասեկա միջազգային միջանցքի համար: Երկաթգիծը ծառայում է որպես կարևորագույն տրասնպորտային երակ Սևծովյան նավահանգիստներից հույժ կարևոր մեծածավալ բեռների (օրինակ՝ նավթամթերք և հացահատիկ) ներկրման համար: Երկաթգիծը լուրջ ներդրումներ է պահանջում նորացման և վերազինման նպատակով, որոնց անհրաժեշտությունը էլ ավելի կբարձրանա սահմանների բացումից հետո: Նախկին Հայկական Երկաթգիծ ընկերությունը այժմ տրոհվել է երեք գործող ընկերությունների՝ ենթակառուցվածք, շարժակազմ և գործառնություններ: 2002թ.-ին՝ առաջին անգամ, բեռնափոխադրումների ոլորտը դարձավ շահութաբեր:

### **Հեռահաղորդակցության ոլորտ**

Բանկի հնարավոր ներդրումը կխթանի ոլորտում մրցունակության բարձրացմանը: Արմենտել ընկերության շարունակական մենաշնորհը և Կառավարության և հունական OSE ընկերության միջև շարունակվող վեճը բացասական ազդեցություն են ունենում ոլորտի զարգացման և աճի վրա: Վերջինիս զարգացման նախապայմանը այս վեճի լուծումն է և մենաշնորհային պայմանների վերանայումը: Կողմերը պետք է ջանքեր գործադրեն առկա խնդիրների շուտափույթ և արդյունավետ լուծման և հեռահաղորդակցության գծային ցանցի բնագավառում մրցակցության բարձրացման ապահովման համար: Կառավարությունը պետք է նաև անհապաղ միջոցառումներ իրականացնի բջջային կապի բնագավառի ազատականացման համար:

Ի լրումն վերը նշված խնդիրների, հեռահաղորդակցման ոլորտի զարգացմանը խոչընդոտում է անկախ կարգավորող կառույցի բացակայությունը: Անհրաժեշտ է բաժանել այդ ոլորտում կարգավորիչ և վերահսկիչ ֆունկցիաներ իրականացնող պետական կառույցները: Այսպիսի անկախ կառույցի ստեղծումը հնարավորություն կընձեռի բնագավառում անհրաժեշտ բարեփոխումների իրականացման, ինչպես նաև ներդրողների վստահության բարձրացման համար: Կառավարությունը բազմիցս անգամ նախատեսել է ստեղծել այդպիսի մի կառույց, սակայն այս հարցում դեռևս զգալի առաջընթաց չի նկատվում:

Որպես ոլորտի զարգացմանն ուղղված առաջին քայլ, Բանկը պատրաստ կլինի քննարկել այս բնագավառում նոր ծրագրերի ֆինանսավորման հարցը, եթե ապահովեն բավարար պայմաններ բջջային և ինտերնետային կապի ոլորտը մրցակցային դարձնելու համար: Բանկը նաև կարող է տրամադրել հետագա տեխնիկական աջակցման միջոցներ ոլորտի համար համապատասխան կարգավորիչ համակարգի ստեղծման ուղղությամբ, եթե կառավարությունը պատրաստակամություն ցուցաբերի այս հարցում: Նախկինում Բանկը տեխնիկական աջակցման միջոցներ է տրամադրել, սակայն 2001թ.-ին ծրագիրը կասեցվել է անհրաժեշտ առաջընթացի բացակայության պատճառով:

## **4. Այլ Միջազգային Ֆինանսական Կազմակերպությունները և Երկկողմ Դոնորները**



Բանկը կշարունակի իր համագործակցությունը միջազգային այլ ֆինանսական կազմակերպությունների և երկկողմ դոնորների հետ՝ իրականացնելով ծրագրերի համաֆինանսավորում և քաղաքական երկխոսության հետագա կոորդինացում: Համագործակցությունը կապահովվի դոնորների ամսեկան կոորդինացիոն հանդիպումներին Բանկի տեղական գրասենյակի մասնակցության միջոցով, ինչպես նաև երկկողմ և բազմակողմ մակարդակներով աշխատանքային հանդիպումների միջոցով: Բանկը շարունակելու է դրամաշնորհային միջոցներ փնտրել ընտրված ներդրումային ծրագրերի նախապատրաստման, իրականացման և համաֆինանսավորման համար, ինչպես նաև ներդրումային և իրավա-օրենսդրական միջավայրի ընդհանուր բարելավմանն ուղղված միջոցառումների համար:

Բանկը սերտորեն կհամագործակցի Համաշխարհային Բանկի հետ էներգետիկ ոլորտի ծրագրերի կոորդինացման ուղղությամբ և ՎՋՄԲ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրերի հետ կապված նախապայմանների մշակման գործում: Համագործակցությունը կշարունակվի նաև ԱՆՌԾ-ի հետ կապված աշխատանքներում, մասնավորապես մասնավոր ոլորտի զարգացման ծրագրերի իրականացման բնագավառում: Կշարունակվեն փոխադարձ քննարկումները ԱՄՀ-ի հետ Աղքատության Նվազեցման և Աձի Ծրագրի իրականացման գործընթացում: Եվրոպական Հանձնառողովի հետ համագործակցություն կծավալվի մի շարք բնագավառներում, ինչպիսիք են ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում Հարավային Կովկասի զարգացման ռազմավարության մշակումը և բիզնես խորհրդատվության տրամադրումը: Օգտագործելով համանման ծրագրերի իրականացման արդյունքում կուտակված փորձը՝ բանկը կհամագործակցի Եվրոպական Հանձնառողովի և այլ դոնորների հետ Մեծամորի ատոմակայանի կանգնեցման աշխատանքների նպատակով հիմնադրամի ստեղծման աշխատանքներում: ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հետ Բանկը կհամագործակցի ՓՄՁ ոլորտի և մասնավոր հատվածի զարգացման, հարկային դաշտի բարեփոխումների իրականացման և էներգետիկայի ոլորտի կարգավորման բնագավառում: Կշարունակվի Բանկի սերտ համագործակցությունը գերմանական կառավարության KfW կազմակերպության հետ՝ ֆինանսական, ինչպես նաև էներգետիկ հատվածի զարգացման բնագավառում: Համագործակցություն կծավալվի նաև այլ դոնորների հետ առանձին ծրագրերի ուղղությամբ: Մասնավորապես, վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի ստեղծման ծրագիրը կպահանջի մի շարք դոնոր կազմակերպությունների մասնակցությունը:

Այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունները և հիմնական երկկողմ դոնորները հետևյալ գործունեությունն են ծավալում.

#### 4.1 Արժույթի Միջազգային Հիմնադրամ (ԱՄՀ)

Հայաստանն անդամակցել է ԱՄՀ-ին 1992թ.-ի մայիս ամսին: ԱՄՀ-ը նպաստում է Հայաստանում մակրոտնտեսական և կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը հետևյալ չորս հիմնական ծրագրերի ներքո՝ համակարգային վերափոխումների ծրագիր (1994թ. փետրվար), մեկ տարվա ռեգերվային համաձայնագիր (1995թ. հունիս), երեք տարվա Ընդլայնված Կառուցվածքային Կարգավորման Ծրագիր (1996 փետրվար) և ներկայիս Աղքատության Նվազեցման և Աձի Ծրագիր (ԱՆԱԾ) որոնց ընդհանուր գումարը կազմում է 234.9 միլիոն SDR. 2001թ. մայիսին ԱՄՀ-ը ԱՆԱԾ-ի շրջանակներում հաստատեց 69 միլիոն SDR (95

միլիոն ԱՄՆ դոլար) արժողությամբ ծրագիրը: Հայաստանի հարաբերությունները ԱՄՀ-ի հետ հիմնականում լավ են՝ բացառությամբ որոշակի ծրագրային ուշացումների: Չորրորդ տրանշի հատկացումը փոքր ինչ ուշացավ կառավարության հետ ընթացող հարկային համակարգի վերաբերյալ բանակցային գործընթացի պատճառով: Գործադիր խորհրդի նիստի հանդիպումը նախնական նշանակված է 2003թ. նոյեմբերի 24-ին իսկ ծրագրերի վերանայման հերթական փուլը կայանալու է 2004թ. ապրիլին:

#### 4.2. Համաշխարհային Բանկի Խումբ

Համաշխարհային Բանկը Հայաստանում հիմնականում աշխատում է Միջազգային Զարգացման Գործակալության (ՄԶԳ) կոնցեսիոն վարկային ծրագրերով: 2003թ. հունվար ամսի դրությամբ Համաշխարհային Բանկը հաստատել է 704 միլիոն ԱՄՆ դոլար (որից 511.2 միլիոն ԱՄՆ դոլար արդեն հատկացվել է) ընդհանուր գումարի ծրագրեր, որոնք ներառում են 29 ՄԶԳ վարկ, մեկ վարկ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի շրջանակներում և երեք ներդրում Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) կողմից: 19 ծրագրեր գտնվում են իրականացման փուլում, իսկ 12 ծրագրերի իրականացումն արդեն ավարտված է: Ծրագրերի գործունեության ոլորտը ընդգրկում է ենթակառուցվածքի վերականգնումը (ներառյալ աղետի գոտու վերականգնման, ոռոգման ջրի համակարգի, էներգետիկայի, ճանապարհների սպասարկման և քաղաքային ջրամատակարարման ծրագրերը) սոցիալական հատվածը (առողջապահություն, կրթություն և սոցիալական ներդրումների հիմնադրամ), գյուղատնտեսությունը, էներգետիկան, ֆինանսական հատվածը և գործարար միջավայրը: Վերջին տարիներին ծրագրերը ուղղվել են դեպի աղքատության նվազեցումը: 235 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի կառուցվածքային աջակցման (ԿԱՎ) չորս վարկերի իրականացումն ավարտվել է 2002թ.-ի վերջին: Ներկայումս իրականացման ընթացքում է գտնվում կառուցվածքային աջակցման 5-րդ վարկը 40 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ, որի նպատակն է մասնավոր հատվածի զարգացումը, հասարակական վարչարարության խթանումը և սոցիալական հատվածի բարեփոխումների շարունակությունը: Արդեն հատկացվել է 20 միլիոն ԱՄՆ դոլար գումարը և երկրորդ տրանշի հատկացումը սպասվում է 2003թ.-ի վերջին: Համաշխարհային Բանկը ներկայումս նախապատրաստում է վեց ծրագիր քաղաքային ջրուցման, ջրամատակարարման, առողջապահության, կրթության և իրավական դաշտի բնագավառում, որոնց ընդհանուր գումարը կազմում է 65 միլիոն ԱՄՆ դոլար: 2004-2006թ.թ. ֆինանսական տարիների վերաբերյալ երկրի աջակցման նոր ռազմավարությունը այժմ գտնվում է նախապատրաստման փուլում և նախատեսվում է ավարտել 2004թ. մարտին:

Հայաստանը 1995թ.-ից ի վեր անդամակցում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիային (ՄՖԿ): ՄՖԿ-ն իր առաջին ծրագիրը ստորագրել է 2000թ.-ին որի արդյունքում 3.6 միլիոն ԱՄՆ դոլար բաժնետիրական ֆինանսավորում է տրամադրվել Արմենիա հյուրանոցին: ՄՖԿ-ն տրամադրում է նաև տեխնիկական աջակցման միջոցներ ներդրումային միջավայրի և կորպորատիվ կառավարման ստանդարտների բարելավման, ինչպես նաև օրենսդրական դաշտի զարգացման նպատակով: ՄՖԿ-ն վերջերս ստորագրել է երկու նոր ծրագիր՝ Հայաստանում ՓՄՁ հիմնադրամի ստեղծման ծրագիրը (որի նպատակն է սփյուռքից մասնավոր

բաժնետիրական ներդրումների ներգրավումը դեպի տեղական ընկերություններ) և մասնավոր լիզինգային ընկերության հիմնադրման ծրագիրը:

#### 4.3 Եվրոպական Միություն

1991-2002թ.թ. ժամանակաշրջանում Հայաստանը շուրջ 330 միլիոն եվրո գումարի դրամաշնորհային աջակցություն է ստացել Եվրոպական Հանձնաժողովից: Այս գումարի շուրջ երկու երրորդ մասը կազմել են մարդասիրական օգնությունը, սննդամթերքը և սննդապահովման ծրագրերը: Գումարի քառորդ մասը տրամադրվել է ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակներում և առանձին շուրջ 20 միլիոն եվրո գումար է հատկացվել միջուկային անվտանգության ծրագրով: Այդ գումարից բացի, ԵՄ-ը նաև 86 միլիոն եվրո գումարի վարկեր է տրամադրել: Հայաստանը նաև օգտվել է ՏՐԱՍԵԿԱ (Եվրոպա-Կովկաս-Ասիա Տրասպորտային Միջանցք) և ԻՆՕԳԵՅԹ (Միջազգային Նավթի և Գազի Եվրոպայի Կազմակերպություն) տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում տրամադրվող աջակցությունից: Եթե հաշվի առնվի նաև ԵՄ անդամ երկրներից ստացվող օգնությունը՝ ԵՄ աջակցության ընդհանուր գումարը կգերազանցի 500 միլիոն եվրոն: ԵՄ աջակցման ներկայիս ծրագիրը առաջնորդվում է 2002-2006թ.թ. Երկրի Ռազմավարության Փաստաթղթով, որը հիմնվում է 1996թ. ստորագրված Համագործակցության և Գործընկերության Համաձայնագրի և վերջերս հայկական կառավարության հետ համաձայնեցված Ազքատության Նվազեցման Ռազմավարական Ծրագրի վրա: ԵՄ Սննդամթերքի անվտանգության ծրագրի շրջանակներում տարեկան հատկացվում է շուրջ 10 միլիոն եվրո գումար, որը օգտագործվում է գյուղատնտեսական և սոցիալական ոլորտներում կարևորագույն կառուցվածքային բարեփոխումների իրականացման և մի շորք կառավարական ծրագրերը ԱՆԲԾ-ի հետ կոորդինացնելու նպատակով: Երկրի Ռազմավարության Փաստաթղթի շրջանակներում մշակվել է ՏԱՍԻՍ-ի 2004-2006 նախնական ծրագիրը, որը հաստատվել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից 2003թ. սեպտեմբերին: Ծրագրի հիմնական ուղղություններն են՝ աջակցել ինստիտուցիոնալ, օրենսդրական և վարչական բարեփոխումների իրականացմանը (ներառելով իրավական խորհրդատվություն, աջակցություն մաքսային և վիճակագրական ծառայությանը, էներգետիկայի ոլորտի բարեփոխումը, տեղական և մարզային իշխանության ապակենտրոնացումը և քաղաքակիրթ հասարակության զարգացումը) և մեղմել տնտեսական անցման սոցիալական հետևանքները (կենտրոնանալով գյուղատնտեսական և սոցիալական ոլորտների, կրթության և մասնագիտական վերապատրաստման ծրագրերի վրա՝ աղքատության նվազեցման նպատակով): Այս ծրագրի մոտավոր բյուջեն 2004-2006թ.թ. համար կազմում է 20 միլիոն եվրո: ԵՄ-ը շարունակում է իր բանակցությունները Հայաստանի հետ Մեծամորի ատոմակայանի փակման վերաբերյալ: ԵՄ-ը պատրաստ է աջակցություն ցուցաբերել Հայաստանին այլընտրանքային էներգետիկայի ծրագրերի մշակման գործում և համագործակցում է այլ դոնորների հետ ատոմակայանի հզորությունների փոխարինմանն ուղղված էներգետիկ ծրագրերի ֆինանսավորման նպատակով հիմնադրամի ստեղծման աշխատանքներում: Եմ-ը պատրաստ է 100 միլիոն եվրո հատկացնել այս հիմնադրամին եթե հաջողվի համաձայնություն ձեռք բերել ատոմակայանի փակման հստակ տարեթվի վերաբերյալ: Եվրոպական Հանձնաժողովը ներկայումս ֆինանսավորում է հայաստանում ՎԶԵԲ-ի կողմից իրականացվող Մենեջմենթի փորձագիտության և Բիզնեսի խորհրդատվության ծրագրերը:

#### 4.4 Հիմնական բազմակողմ ծրագրերը

## Միացյալ Նահանգներ

ԱՄՆ Ջարգացման Միջազգային Գործակալության ծրագիրը Հայաստանի խոշորագույն երկկողմ ծրագրերից մեկն է, որի շրջանակներում 1991-2002թ.թ. ժամանակաշրջանում տրամադրվել է շուրջ 1.3 միլիարդ եվրո գումար: Միացյալ Նահանգները ավանդամբար հանդիսանում են նաև երկրին զգալի ծավալի մարդասիրական օգնություն տրամադրող երկրներից մեկը: 1999-2003 ԱՄՆ Ջարգացման Միջազգային Գործակալության ծրագիրը Հայաստանում բաղկացած է հետևյալ վեց հիմնական մասերից.

- մասնավոր հատվածի զարգացում (որը ներառում է տեխնիկական աջակցություն Հայաստանում սեփականաշնորհման, ՓՄՁ աջակցության, կոմերցիոն իրավունքի, հարկային և մաքսային օրենսդրության բարեփոխումների իրականացմանը՝ հաշվի առնելով վերջերս տեղի ունեցած անդամությունը ԱՄԿ-ին)
- էներգետիկայի հատված
- ժողովրդավարություն
- սոցիալական անցում
- ջրային ռեսուրսների կառավարում
- հատուկ նախաձեռնումներ:

1997-2003 ֆինանսական տարիների ընթացքում ԱՄՆ Ջարգացման Միջազգային Գործակալության կողմից Հայաստանին տրամադրված ընդհանուր գումարը կազմել է տարեկան 50-ից 70 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագրերի ուղղությունը աստիճանաբար տեղափոխվեց մասնավոր հատվածի և էներգետիկայի զարգացումից դեպի սոցիալական ոլորտում համագործակցության ծրագրերը:

## Գերմանիա

Գերմանիայի և Հայաստանի համագործակցության բազմաբնույթ ծրագրերը տեխնիկական և ֆինանսական բնագավառներում 1993-2002 ժամանակաշրջանում կազմել են 118.19 միլիոն եվրո: Գերմանիայի կողմից տրամադրվող երկկողմ ծրագրի կարևորագույն ուղղությունը ՓՄՁ զարգացում է: Գերմանական GTZ կազմակերպությունը իր Pro-SME ծրագրի շրջանակներում տրամադրել է տեխնիկական աջակցություն երեք մակարդակներով.

- մակրո մակարդակ. աջակցություն կառավարությանը և օրենսդրական բարեփոխումների իրականացում
- միջին մակարդակ. աջակցություն ՓՄՁ աջակցող կազմակերպություններին, ներառյալ վերապատրաստման ծրագրերը
- միկրո մակարդակ. ուղղակի աջակցման ծրագրեր ՓՄՁ ոլորտում:

Գերմանական KfW կազմակերպությունը ՓՄՁ ֆինանսավորման նպատակով ՀՀ Կենտրոնական Բանկի հետ համատեղ ստեղծել է Գերմանա-Հայկական Հիմնադրամ, որը ներկայումս կազմում է 12.3 միլիոն եվրո: 2003թ.-ին լրացուցիչ հատկացվել է 4.5 միլիոն եվրո: Ծրագիրը համալրվում է 0.5 միլիոն եվրո գումարի տեխնիկական աջակցման բաղադրամասով: Վերջերս հաստատվել է նաև երաշխիքների տրամադրման երկու ծրագիր՝ յուրաքանչյուրը 3.8 միլիոն եվրո գումարի, որոնց նպատակն է՝ գերմանական գործընկեր բանկերից գումարների

ներգրավումը դեպի տեղական առևտրային բանկեր: Քննարկվում է 4 միլիոն եվրո գումարի հատակացումը ավանդների ապահովագրման հիմնադրամին, որից 0.5 միլիոն եվրոն կհատկացվի որպես դրամաշնորհ, իսկ 3.5 միլիոն եվրոն՝ վարկի տեսքով:

### **Միացյալ Թագավորություն**

Հայաստանում ծրագրեր իրականացնող հիմնական գործընկեր կառույցը Ջարգացման Միջազգային Դեպարտամենտն (DFID) է: 1993-1997թ.թ. ժամանակաշրջանում հատկացված օգնության տարեկան միջին գումարը կազմել է շուրջ 10 միլիոն եվրո: DFID-ի կողմից ուղղակիորեն իրականացված ծրագրերի գումարը 1998-2001թ.թ. կազմել է 3.1 միլիոն եվրո, որը 2003թ. նաատեսվում է հասցնել մինչև 3.7 միլիոնի: DFID-ի աշխատանքները հիմնականում կենտրոնանում են աղքատության նվազեցման հիմանխնդրի վրա, որը իրականացվում է ԱՆՌԾ-ի շրջանակներում: Այս առումով DFID-ն աջակցում է կառավարության Հասարակական Ոլորտի Բարեփոխումների Ծրագրի կատարմանը (համագործակցելով Համաշխարհային Բանկի և Եվրոպական Միության հետ), ինչպես նաև իրականացնում է Միջին ժամկետայնության Ծախսերի ծրագիրը: DFID-ը նաև 2001թ. անցկացված մարդահամարը ֆինանսավորող հիմնական դոնորներից մեկն էր: Նախատեսվում է 2002-2007թ.թ. հինգ տարվա ժամանակաշրջանում DFID-ի կողմից հատկացնել շուրջ 12 միլիոն եվրո գումար, որը ուղղվելու է սոցիալ և տնտեսական զարգացման ծրագրերին, ինչպես նաև տարածքային վարչարարության և երկրի որոշ շրջանների զարգացմանը:

### **Ճապոնիա**

Ճապոնիայի երկկողմ աջակցության ծրագիրը Հայաստանի հետ սկսվել է 1991թ.-ին: 2001թ.-ի վերջի դրությամբ հատկացվել է 27.7 միլիոն ԱՄՆ դոլար գումար, որը ներառում է 21.6 միլիոն ԱՄՆ դոլար գումարի դրամաշնորհներ և 5 միլիոն դոլար գումարի տեխնիկական աջակցման ծրագրեր:

2001թ.-ին սկսվել է էլեկտատներգիայի հաղորդման և բաշխման համակարգի 5,400 միլիոն ճապոնական յեն արժողությամբ ծրագիրը: Դրամաշնորհային ամենախոշոր ծրագիրը 1999թ.-ին Հայաստանի Հանրապետական Բժշկական Կենտրոնին հատկացված 518 միլիոն ճապոնական յեն գումարի բժշկական սարքավորումների նորացման ծրագիրն է:

Ճապոնական աջակցման ծրագրի հիմնական ուղղություններն են.

- հիմնական տնտեսական կառուցվածքի հավաքագրում
- էներգետիկայի ոլորտ
- տրասնպորտային ենթակառուցվածք
- ոռոգման և ջրամատակարարման համակարգերի բարելավում
- սոցիալական ոլորտ (առողջապահություն, կրթություն, գործազրկության հետևանքների մեղմացում և աղքատություն):

## **Հավելված 1 - Քաղաքական գնահատական**

### **Բանկի հիմնադրման 1-ին հոդվածի պահանջների համապատասխանությունը**

Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է բազմակուսակցական ժողովրդավարության, պլուրալիզմի և շուկայական տնտեսության սկզբունքներին և համապատասխանում է Բանկի Հիմնադրման Պայմանագրի Հոդված 1-ի պայմաններին, սակայն այդ սկզբունքների կիրառումը անցյալ ռազմավարության ժամանակահատվածում փոփոխական է եղել: Չնայած նրան, որ երկիրը հաջողությունների է հասել տնտեսության, գների ազատականացման և որոշ կառուցվածքային բարեփոխումների ոլորտում տարածաշրջանի այլ երկրների համեմատ, առկա են խնդրահարույց հարցեր կապված 2003թ. անցկացված նախագահական և խորհրդարանական ընտրությունների, մամուլի ազատության և օրենքի գերակայության ապահովման հետ: Անկախության ձեռք բերման շրջանից ի վեր Հայաստանը ժողովրդական բարեփոխումների շնորհիվ լուրջ առաջընթաց է ապրել, որոնց արդյունքում երկիրը 2001թ.-ին անդամակցեց Եվրոպական Խորհրդին: Նորընտիր իշխանությունները հնարավորություն ունեն վերադարձ կատարել դեպի այդ բարեփոխումների քաղաքական ուղղվածությունը, վերականգնել հասարակության վստահությունը և քաղաքական քայլեր նախաձեռնել երկրում անցման ժամանակաշրջանի հետ կապված առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

### **Քաղաքական պատասխանատվություն**

Հայաստանի քաղաքական առաջնորդների պատասխանատվությունը սահմանված է երկրի իշխանության սահմանադրական բաժանմամբ և ապահովվում է պարբերաբար անցկացվող ընտրություններով: Սակայն գործնականում քաղաքական համակարգի գործունեությունը կարիք ունի հստակեցման և ընտրությունների կազմակերպման կարգը չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

Հայաստանի նախագահը օժտված է բացառիկ գործադիր լիազորություններով, որոնք սահմանափակում են կառավարման այլ ինստիտուտների մասնակցությունը քաղաքականության ձևավորմանը, քաղաքական բանավեճերի անցկացմանը և իշխանության կողմից ուժի օգտագործման չարաչափման արգելակմանը: Նախագահը ձևավորում է նախարարների կաբինետը և կարող է լուծարել խորհրդարանը, ինչպես նաև նշանակում է տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին և Երևանի քաղաքապետին: 2002թ.-ին կատարվել է ընտրությունների անցկացումը կարգավորող օրենսդրության ձևափոխում, որի համաձայն նախագահին տրվեցին լիազորություններ ուղղակիորեն նշանակել ազգային և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների մեկ երրորդին, որի արդյունքում բարձրացվեց նախագահի ազդեցությունը ընտրական գործընթացի վրա: Վերջին երկու տարիների ընթացքում ակտիվորեն քննարկվում էին մի շարք սահմանադրական բարեփոխումներ, որոնք նպատակ ունեին վերաբաշխել քաղաքական ուժը նախագահի և խորհրդարանի միջև, սակայն 2003թ. մայիսին այս հարցով կազմակերպած ռեֆերենդումը (որը պատրաստվել էր նախագահի աշխատակազմի կողմից) չեղյալ հայտարարվեց ընտրությունների օրը տեղի ունեցած չափազանց ցածր հաճախելիության պատճառով:

Քաղաքական կուսակցությունների համակարգի ամրապնդմանն ուղղված ջանքերը առաջխաղացում ունեցան 2002թ.-ի կեսերին ընդունված երկու բարեփոխումների շնորհիվ: Խստացվեց քաղաքական կուսակցությունների գրանցման կարգը, որի համաձայն կուսակցությունները պարտավոր են ունենալ առնվազն 200 անդամ և մասնաձյուղեր Հայաստանի շրջաններից առնվազն մեկ երրորդում: Այս փոփոխությունը ենթադրաբար պետք է նվազեցնի այն կուսակցությունների թիվը, որոնք արհեստականորեն ստեղծվում էին ազգային կամ տեղական ընտրությունների ժամանակ ձայների հավաքագրելու նպատակով: Ընտրությունների մասին օրենքում կատարված փոփոխությունները թույլ տվեցին նաև խորհրդարանի 131 տեղերից 75-ը բաշխել ըստ կուսակցական ցուցակների՝ նախկին 56-ի փոխարեն: Այս փոփոխությունը կնպաստի քաղաքական կուսակցությունների ավելի ինտենսիվ զարգացմանը, ինչպես նաև խորհրդարանական ֆրակցիաների մասնագիտացմանը և քաղաքական ֆունկցիաների կատարելագործմանը:

Վերջերս կայացած նախագահական և խորհրդարանական ընտրությունները շեղվեցին նախկին ընտրությունների ընթացքում ձեռք բերված դրական միտումներից: Նախագահական ընտրությունների 2003թ. փետրվարի 19-ին կայացած առաջին փուլը և մարտի 5-ին կայացած երկրորդ փուլը խստորեն դատապարտվեցին ԵԱՀԽ Ընտրությունների Դիտորդական Առաքելության կողմից, որը եզրակացրեց որ «Հայաստանի Հանրապետությունում անցկացված ընտրությունները չէին համապատասխանում ժողովրդավարական ընտրությունների միջազգային ստանդարտներին»: Վերջնական հաշվետվությունը մասնավորապես նշում է, որ տեղի են ունեցել լուրջ անձշտություններ ընտրությունների, ձայների հաշվարկի և աղյուսակավորման ընթացքում, որոնք ուղղորդվել են ընտրական արկղերի լցումամբ: Ընտրությունների անցկացման գործընթացը նաև քննադատվել է քաղաքական ընդդիմության կողմից, որը առաջին փուլից հետո լայնամասշտաբ բողոքի ցույցեր էր կազմակերպել, որոնց արդյունքում ոստիկանությունը ձերբակալեց հարյուրից ավելի մարդ:

ԵԱՀԽ դիտորդական առաքելությունը քննադատում էր իշխանություններին վախի մթնոլորտի ստեղծման, գործող նախագահի ընտրական կամպանիան հասարակական ռեսուրսների հաշվին ֆինանսավորելու, ինչպես նաև պետական հեռուստակայանների կողմից միակողմանի լուսաբանման համար: Ընտրությունների վերաբերյալ հաշվետվության մեջ հղում է կատարում օրենսդրական և վարչարարական մի շարք խնդիրներին, սակայն վերջնական եզրակացության մեջ ամփոփվում է, որ 2003թ. նախագահական ընտրությունների անհապատասխանությունը միջազգային ստանդարտներին ոչ թե տեխնիկական կամ գործառնական թերությունների արդյունք է, այլ պայմանավորված է իշխանությունների կողմից ազնիվ և արդար ընտրական գործընթաց կազմակերպելու նկատմամբ ոչ բավարար քաղաքական դիրքորոշմամբ:

Ըստ ԵԱՀԽ ընտրությունների դիտորդական առաքելության և Եվրոպական խորհրդի՝ 2003 մայիսին կայացած խորհրդարանական ընտրությունները դրականորեն տարբերվում էին նախագահականից, սակայն այստեղ ևս չհաջողվեց մի շարք կարևոր առումներով ապահովել համապատասխանությունը միջազգային ստանդարտներին: Նշվում են արդյունքների կեղծման, դիտորդների վրա ճնշում գործադրելու և բանակային պայմաններում ընտրանքային գաղտնիքի խախտման

փաստեր: Դիտորդական առաքելությունը նաև նշել է, որ գրանցված ընտրողների ընդամենը 53 տոկոսի մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին վկայում է երկրում ընտրական գործընթացի և քաղաքական ինստիտուտների հանդեպ ընտրողների ունեցած ցածր վստահության մասին:

Քաղաքական ինստիտուտների հանդեպ հասարակության վստահության ցածր մակարդակը արտահայտվում է նաև շարունակաբար նվազող քաղաքացիական աշխուժությամբ: Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների գրանցումն ու գործունեությունը կարգավորող օրենքները այս ոլորտի զարգացման համար բավարար հիմքեր են ստեղծում, սակայն մի շարք կազմակերպություններ համարում են, որ այս օրենսդրական դաշտը դեռևս որոշակի բարդություններ ունի: 2002թ. վերջի դրությամբ Հայաստանում պաշտոնապես գրանցված էր 2,800 հասարակական կազմակերպություն, որոնցից շուրջ մեկ երրորդը գրանցվել էին նախորդ տարում: Տարբեր գործունեության ոլորտներ ունեցող այս կազմակերպությունների մեծ մասը սակայն գործնականում չի գործում: Սյուս կողմից, գործող կազմակերպությունները ընդամենը չնչին ազդեցություն ունեն քաղաքականության ձևավորման գործընթացի վրա: Բացառություն են կազմում ընտրական գործընթացի մոնիտորինգ իրականացնող հասարակական կազմակերպությունները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցվել են շուրջ 30 կազմակերպություն, որոնք գործում էին որպես տեղական դիտորդներ 2003թ.-ի նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Այս կազմակերպությունների շարքում խոշորագույններից մեկը «Սա ձեր ընտրությունն է» կազմակերպությունն էր, որը 700-ից ավելի տեղամասերում իր դիտորդներն ուներ:

### **Օրենքի գերիշխանություն**

Օրենքի գերիշխանությունը Հայաստանի քաղաքական օրակարգի կարևորագույն խնդիրներից մեկն է և վերջին տարիներին իրագործվեցին ներդրումային դաշտի բարելավման և Եվրոպական խորհրդի անդամակցության պահանջների բավարարմանն ուղղված մի շարք օրենսդրական բարեփոխումներ (տես Հավելված 3-ի 3.1 կետը օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ): Այնուամենայնիվ, դատական իշխանության և դատախազության համակարգի անկախությունը բնակչության գերակշիռ մասի և միջազգային դոնոր կազմակերպությունների կարծիքով դեռևս վստահություն չի ներշնչում: 2003թ. մայիսին ռեֆերենդումին բավարար ձայներ չհավաքելու պատճառով դատական համակարգի անկախությունն ամրապնդելու համար նախատեսված սահմանադրական բարեփոխումների փաթեթը հետաձգվեց և դոնորները կրճատեցին դատախազական բարեփոխումների զարգացմանն ուղղված իրենց կողմից իրականացվող ծրագրերը այս բնագավառում առաջընթացի բացակայության պատճառով:

Ինչպես վկայում են Թրանսփերենսի Ինթերնեյշնլ կազմակերպության կողմից կատարված վերջին հարցումները՝ օրենքի գերիշխանության խնդիրների հանդեպ բարձր է հասարակության ուշադրությունը: 2002թ.-ին Թրանսփերենսի Ինթերնեյշնլ կազմակերպության կողմից կատարված «Կոռուպցիայի Գնահատականը Երկրում» հետազոտությունը վկայում է, որ ըստ հարցումների դատախազությունը և դատարանները համարվում են կոռուպցիայի ամենաբարձր մակարդակ ունեցող հաստատություններ: Հարցումին մասնակցած 1000 տնային տնտեսություններից 750-ը համարում են դատարանները կոռումպացված կամ չափազանց



կոռումպացված: Հասարակության մտահոգությունը այս հարցով արտահայտվում է նաև խորհրդարանական երկու առաջատար կուսակցությունների անվամբ՝ “Օրինաց երկիր” և “Արդարություն Դաշինք”:

Թրանսպերենսի Ինթերնեյշնլ կազմակերպության կողմից հրապարակվող կոռուպցիայի գնահատականի ինդեքսի համաձայն 2003թ.-ին Հայաստանը 133 երկրների շարքում զբաղեցրել է 78-րդ տեղը, իսկ երկրի գնահատականը եղել է 3 միավոր՝ 10 միավոր համակարգով (որտեղ 10-ը լավագույն միավորն է): Այս ցուցանիշը անցումային երկրների մակարդակով միջին տեղ է գրավում իսկ ԱՊՀ երկրների շարքում երկիրը դասվում է երկրորդ տեղում: Այս գնահատականը ինքնին վկայում է այն մասին, որ երկրում առկա են կոռուպցիայի հետ կապված լուրջ խնդիրներ, որոնք պահանջում են իշխանությունների ուշադրությունը: Կառավարությունը արդեն երկու տարի աշխատել է ազգային հակակոռուպցիոն ծրագրի մշակման վրա՝ համագործակցելով միջազգային դոնորների հետ: Ծրագիրը հավանության է արժանացել 2003թ.-ի նոյեմբերին: 2002թ.-ին ուժի մեջ է մտել մի օրենք, որը քաղաքացիական ծառայողներին պահանջում է հայտարարագրել իրենց եկամուտները և կոչված է բացառելու շահերի բախումները և բարձրացնելու թափանցիկությունը: Օրենքը, սակայն, գործնականում թերի է կիրառվում: Ավելի լավատեսական լուր է այն, որ ըստ 2002թ.-ին անցկացված գործարար միջավայրի և ձեռնարկատիրության հարցման՝ ձեռներեցների կարծիքով կաշառակերության ծավալները նվազել են և հարկային և մաքսային վարչարարության վերջերս իրականացված բարեփոխումները, քաղաքացիական ծառայողների մասին օրենքի ընդունումը և ապակարգավորումը դրական դեր են ունեցել:

### **Քաղաքացիական իրավահամակարգը և մարդու իրավունքները**

Հայաստանի սահմանադրությամբ ամրագրված են հիմնական ժողովրդավարական սկզբունքները և իրավունքները, որոնք ընդհանուր առմամբ գործնականում իրագործվում են: 2001թ.-ին Հայաստանն անդամակցեց Եվրոպայի Խորհրդին, իսկ 2002թ. ապրիլին ընդունեց մարդու իրավունքների Եվրոպայի կոնվենցիան: Այնուամենայնիվ, միջազգային հասարակությունը նշում է, որ առկա են մի շարք խնդիրներ իրավական համակարգի, ազգային օրենքների կիրառման և միջազգային կոնվենցիաների պաշտպանման բնագավառում: Օրինակ՝ ազգային օրենսդրությամբ արգելված է մանուկների աշխատուժի օգտագործումը և այս օրենքը գործում է, սակայն Աշխատանքի Միջազգային Կազմակերպության 182-րդ կոնվենցիան մանկական աշխատուժի մասին դեռևս Հայաստանի կողմից հաստատված չէ: Մյուս խնդիրը մարդկանց անօրինական տեղափոխումն է, որը դեռևս օրենքով արգելված չէ: Ըստ Միգրացիայի Միջազգային Կազմակերպության տվյալների, տարեկան շուրջ 700 կին և աղջիկ տեղափոխվում են արտասահման հիմնականում մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով: Նշվում է, որ խնդիրն ավելի է սրվում ոստիկանության, սահմանապահների և մաքսային ծառայության աշխատողների կաշառվածության պատճառով: Միջազգային հասարակության և ազգային ոչ պետական հասարակական կազմակերպությունների ճնշման ներքո այս խնդիրը այժմ գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում:

Նախկին ռազմավարության ժամանակաշրջանում նշվել էր, որ կարևոր խնդիր էր հանդիսանում ազատ արտահայտվելու իրավունքը: Չնայած Հայաստանում առկա է անկախ մամուլ և զանգվածային լրատվության կազմակերպություններ, ԵԱՀԽ-ը,

Եվրոպական խորհրդը և մի շարք միջազգային հասարակական կազմակերպություններ քննադատել են անկախ լրագրողների և լրատվական կազմակերպությունների հանդեպ վերջերս տեղի ունեցած ճնշումները: Այս խնդիրների շարքում նշվում են քննադատող մամուլի հանդեպ քրեական պատասխանատվության կիրառումը, վերջերս ընդունված հակասական օրենքը որի համաձայն լրատվական գործակալությունները պարտավոր են հրապարակել իրենց ֆինանսավորման աղբյուրները, առաջատար անկախ հեռուստակայաններից մեկի փակումը և լրագրողների հանդեպ ուժի կիրառման փաստերը: Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը նախագահին իրավուքն է վերագրում նշանակել արտոնագրեր տրամադրող կոմիտեյի ինը անդամներին, որի արդյունքում արտոնագրից զրկվեցին կառավարության հանդեպ քննադատական դիրք գրաված երկու հեռուստակայան՝ Ա1 պլյուսը և Նոյյան Տապանը: Այս զարգացումների պատճառով 2003թ.-ին Ֆրիդոմ Հաուս կազմակերպությունը հայաստանյան մամուլի դասակարգումը փոխեց «մասամբ ազատ»-ից «ոչ ազատ»-ի:

### **Արտաքին հարաբերություններ**

Լեռնային Ղարաբաղի հարցը շարունակում է հանդիսանալ Հայաստանի արտաքին հարաբերությունների գերխնդիրներից մեկը, որի արդյունքում երկիրը գտնվում է մասնակի մեկուսացման մեջ: ԵԱՀԽ Մինսկի խումբը շարունակում էր խնդրի երկկողմանի լուծումներ փնտրել, սակայն 2003թ.-ին երկու երկրներում տեղի ունեցած ընտրությունները խոչընդոտ հանդիսացան այս պարագայում: Ընտրությունների ժամանակաշրջանից հետո ուշադրությունը սևեռվեց երկու երկրներում քաղաքական կայունության պահպանման վրա և հույս կա որ բանակցային գործընթացը նոր ընթացք կստանա:

Նորընտիր իշխանությունները հետամուտ են կշռադատված արտաքին քաղաքականության վարմանը և տարածաշրջանում հիմնական ուժերը ներկայացնող երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրոմիության, Ռուսաստանի և Իրանի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանմանը: Անցյալ տարի Հայաստանի ռազմավարական համագործակցությունը Ռուսաստանի հետ էլ ավելի ամրապնդվեց Հայաստանի 94 միլիոն ԱՄՆ դոլար պետական պարտքի դիմաց հայկական հինգ ձեռնարկությունները Ռուսաստանի Ղաշնությանը փոխանցելու համաձայնագրով: Ռուսաստանը և Հայաստանը ունեն համագործակցության համաձայնագիր նաև պաշտպանության բնագավառում, որի ներքո Ռուսաստանը պահպանում է իր ռազմակայանները Հայաստանի տարածքում: Թուրքիայի հետ հարաբերությունները շարունակում են լարված մնալ, որը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցով և 1915թ. իրադարձությունների մեկնաբանմամբ: Վերջերս հայտարարություններ են կատարվել սահմանի բացման վերաբերյալ, որը էապես կնպաստեր Հայաստանի արտաքին առևտրի աշխուժացմանը:

## Հավելված 2 - Շրջակա միջավայրի պահպանման խնդիրներ

### 1. Շրջակա միջավայրի հիմնահարցերը

- **Հողի աղտոտվածությունը թունաքիմիկատներով.** 1996թ.-ին 200 նմուշ է հետազոտվել քիմիական աղտոտվածության մակարդակը որոշելու նպատակով: Նմուշներից մեկում նկատվել է պեստիցիդների բարձր մակարդակ, իսկ մյուսում՝ ծանր մետաղների առկայություն: Ստուգված նմուշներից 17-ը չէին համապատասխանում նորմալ բակտերիոլոգիական չափանիշներին, իսկ ևս 20 նմուշներում հայտնաբերվել էր հելմիտի բարձր մակարդակ: Երևան քաղաքում կատարված հետազոտությունները ցույց տվեցին լայնածավալ աղտոտվածություններ ծանր մետաղներով և թափոններով:
- **Անտառների վերացում.** Հայաստանի անտառային ռեսուրսների վնասումը սկսվել է 1930թ.-ի ինդուստրալիզացման և կոլեկտիվացման գործընթացի ժամանակ և առանձնապես սրացել է 1990թ. էներգետիկ ճգնաժամի տարիներին, երբ քաղաքացիները ստիպված էին փայտը օգտագործել որպես վառելիք: Այս խնդրի հետ է կապված նաև սողանքների առաջացումը և տարածումը: Արդյունքում առաջացել է հողերի էրոզիա և աղակալում: Հայաստանի հողային ռեսուրսները սակավ են, իսկ գետերի միջոցով երկրի սահմաններից դուրս է մղվում ավելի քան 4 միլիոն տոննա վարելահող և սևահողի լուծույթ: Այս ամենի արդյունքում ամեն տարի վարելահողի հազարավոր հեկտարներ անօգտագործելի են դառնում և տարեց տարի նվազում են անտառային ռեսուրսները և արոտավայրերը:
- **Հրազդան և Արաքս գետերի աղտոտվածությունը.** արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները իրենց թափոնները արտանետում են քաղաքային կոյուղի կամ ուղղակիորեն գետերի և ջրատարների մեջ: Վերջին 9 տարիների ընթացքում արդյունաբերական հզորությունները նվազել են 80-90 տոկոսով, դրանով իսկ նվազեցնելով անցանկալի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ջրի աղտոտման ռիսկը կապված է նաև մի շարք օրինական և անօրինական աղբանոցներում վտանգավոր աղբակույտերի կուտակումների հետ: Գետերի և լճերի նախկինում տեղի ունեցած աղտոտումը դեռևս ուսումնասիրված չէ:
- **Սևանա լճի մակարդակի անկումը** պայմանավորված է լճից ջրի արտամղումներով: Արտամղված ջուրն օգտագործվել է ոռոգման և Մեծամորի ատոմակայանի կանգի հետ կապված էլեկտրաէներգիայի արտադրության պակասը լրացնելու համար: Լճից կատարվող արտամղումները արհեստականորեն ավելացվեցին սկսած 1933թ.-ից: Ջուրն օգտագործվում էր ոռոգման և էլեկտրաէներգիայի արտադրության համար: Ջրի մակարդակի անկման պատճառով վտանգվել է լճի էկոհամակարգը, փոխվել են ֆիզիկական պայմանները (ջերմաստիճանը, թափանցիկությունը) և ձկների ու բուսականության կենսաբանական պայմանները: Այնուամենայնիվ, շուտով նաատեսվում է լրացուցիչ ջրի ներարկում կատարել լճի հարավ-արևելքում գտնվող աղբյուրից:
- **Մեծամորի Ատոմակայանը** գտնվում է սեյսմիկ գոտում և ունի երկու ռեակտոր, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 815 ՄՎ: Ատոմակայանը փակվեց 1989թ. մարտին, Խորհրդային Միության ժամանակ, անվտանգության

նկատառումներից ելնելով, երբ տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի կործանարար երկրաշարժը: Սակայն, խորացող էներգետիկ ճգնաժամի և Թուրքիայի և Ադրբեջանի կողմից կիրառվող տնտեսական շրջափակման պայմաններում, Հայաստանը 1995թ. նոյեմբերի 5-ին որոշեց վերագործարկել ատոմակայանի 440 Մվ. հզորություն ունեցող երկրորդ բլոկը: Այս կայանը, որը կառուցվել է 1980թ.-ին և ունի 30 տարվա օգտագործման ժամկետ, այժմ ապահովում է երկրի էլեկտրաէներգիայի պահանջարկի 40-ից 45 տոկոսը: Եվրոպական հանձնաժողովը պահանջում է փակել ատոմակայանը և նրա կարծիքով կայանը անվտանգ չէ քանզի գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում և նրա ռեակտորները կառուցված են խորհրդային արատավոր տեխնոլոգիայով: Հայաստանի կառավարությունը նշել է, որ պատրաստ է փակել կայանը, եթե ապահովվեն բավարար չափով այլընտրանքային էներգիայի աղբյուրներ:

## **Համաշխարհային Բանկի և Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի գործունեությունը**

### **Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագիր**

- Անապատացման դեմ պայքարի Միացյալ Ազգերի կոնվենցիայի կիրառման ծրագիրը մեկնարկել է 2003թ. հունիսին: Ծրագրի նպատակն է՝ վերականգնել անապատացման ենթակա տարածքները:
- Կայուն Մարդկային Զարգացման Համակարգված Աջակցության Ծրագրի շրջակա միջավայրի պաշտպանության բաժինը նպատակ ունի զարգացնելու տարածքային անտառտնտեսությունների և կազմակերպությունների կարողությունները Լոռու մարզի անտառների վերականգնման համար:
- Զրամատակարարման և Զրահեռացման ծրագիրը նախատեսում է բարելավել ջրային ռեսուրսների պահպանմանն ուղղված օրենսդրությունը և ուսումնասիրել կոյուղու ջրերի վերամշակման հնարավորությունը:


### **Համաշխարհային Բանկ**

- Բնական Ռեսուրսների Կառավարման և Ազբատության Նվազեցման Ծրագիրը նպատակ ունի բարելավել բնական ռեսուրսների կառավարումը և խթանել գերակա ջրատարներին հարակից գյուղական համայնքների կայուն տնտեսական զարգացումը: Ծրագրի նպատակներն են.
  - մշակել և իրականացնել ընտրանքային տեղական համայնքներում միկրո-ջրամբարների կառավարման նախագծեր
  - աջակցել կենսաբազմազանության և բնական ռեսուրսների պահպանմանն ուղղված տեխնիկական միջոցառումների իրականացմանը, ապահովելով տեղական համայնքների տնտեսական շահերը
  - ամրապնդել տեղական ջրային ռեսուրսների կառավարման կազմակերպությունների կարողությունները
- Մունիցիպալ զարգացման ծրագրի նպատակն է՝ կատարել Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարման համակարգի անհապաղ նորոգումներ և բարձրացնել ջրամատակարարման արդյունավետությունը, կառավարումը և սպասարկման մակարդակը Երևան քաղաքում՝ այս բնագավառում աստիճանաբար ներգրավելով մասնավոր կառավարում:

### Հավելված 3 - Օրենսդրական Բարեփոխումներ

#### Ընդհանուր գնահատական

Հայաստանի կոմերցիոն իրավութի զարգացվածությունը և արդյունավետությունը:



Աղբյուր՝ Իրավա-օրենսդրական չափորոշիչների հետազոտություն, ՎՋԵԲ 1997-2002  
Ծանուցում՝ 0 նիշը համապատասխանում է չնչին առաջընթացին կամ առաջընթացի բացակայությանը, 5 նիշը համապատասխանում է զգալի առաջընթացին

Հայաստանի կոմերցիոն օրենսդրության և իրավունքի մակարդակը վերջին 6 տարիների ընթացքում համարվում է կայուն, սակայն օրենքները դեռևս չեն համապատասխանում ընդունված միջազգային չափանիշներին: Օրենքները կարիք ունեն հստակեցման և պարզեցման, իսկ նրանց իրականացման համակարգը և դատական կատարումը չի կարող բավարար համարվել: Չնայած այն բանին, որ 2002թ.-ին տեղացի մասնագետները նկատել են որոշակի առաջընթաց, լրացուցիչ ջանքեր են հարկավոր արդյունավետ տեղական իստիտուտների կայացման համար և օրենքների արդյունավետությունը նրանց բովանդակային զարգացման աստիճանին հասցնելու ուղղությամբ:

2002թ. ՎՋԵԲ-ի կողմից իրականացված իրավա-օրենսդրական չափորոշիչների հետազոտության համաձայն, որտեղ հաշվի է առնվում Հայաստանում գործող իրավաբանների գնահատականը, նշվում է, որ երկրում գործող կոմերցիոն օրենսդրությունը հազիվ թե կարելի է բավարար անվանել ներդրումային և առևտրային արդյունավետ գործունեության ծավալման համար:

## Իրավա-օրենսդրական դաշտի գնահատական

### Սնանկություն

Հայաստանում ձեռնարկությունների սնանկության հարցերը կարգավորվում են «Ձեռներեցների, իրավաբանական անձանց, և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների սնանկության և ֆինանսական վերակազմավորման մասին» 1996թ. դեկտեմբերի 3-ին ընդունված օրենքով: Սնանկության մասին օրենքը ներառում է կարևոր դրույթներ սնանկության և վերակազմավորման ժամանակակից գործընթացի վերաբերյալ, սակայն նրանում դեռևս առկա են մի շարք կարևոր թերություններ և նրա գործնական կիրառումը կատարելագործման կարիք ունի:

Ընդհանուր առմամբ սնանկության օրենսդրությունը ապահովում է վարկատուներին ձեռնարկության մնացորդային արժեքի բաշխման մեխանիզմը կամ դատարանի հավանությամբ վերակազմավորման նախագծի ընդունումը: Օրենքը գերակայություն է սահմանում ապահովված վարկատուների համար, որը համապատասխանում է ռացիոնալ կոմերցիոն իրավունքի նորմերին: Այն, սակայն, չի կարգավորում գրավադրված ակտիվների պահպանման և իրացման հետ կապված ծախսերի հարցը: Անհրաժեշտ է հստակ դրույթներ սահմանել իրացման ծախսերի ներառման և այլ ծախսերի սահմանափակման համար:

Օրենքը իր ներկայիս տեսքով չի կարգավորում այն անապահով վարկատուների շահերը, որոնք քվեարկել են վերակազմավորման նախագծի դեմ: Ավելին, սնանկության կառավարչի համար նախատեսված չնչին վարձատրությունը հնարավորություն չի ընձեռում ներգրավել այն որակյալ մասնագետներին, որոնք ունեն սնանկության գործընթացի կառավարման համար անհրաժեշտ գիտելիքներ և փորձ: Սնանկության կառավարիչները շահագրգռված են հետաձգել սնանկության գործընթացը, իրենց համար լրացուցիչ վարձատրություն ապահովելու նպատակով: Արդյունքում սնանկության գործընթացները կարող են անվերջ ընթանալ:

### Կապիտալի շուկաներ

Հայաստանում կապիտալի շուկան հիմնականում կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» 2000թ. ընդունված օրենքով: Օրենքը մշակվել է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության աջակցությամբ: Օրենքը կարգավորում է արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, ինքնակարգավորվող կազմակերպությունների (ներառյալ Կենտրոնական Դեպոզիտարիան) և բորսաների փոխհարաբերությունները: Այս օրենքի շրջանակներում, 2000թ. օգոստոսին կազմավորվեց Հայաստանի Հանրապետության Արժեթղթերի Հանձնաժողովը, որը ստանձնեց արժեթղթերի շուկայի կարգավորման հիմնական լիազորությունները: Արժեթղթերի հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամներից, որոնք նշանակվում են ՀՀ նախագահի կողմից՝ հինգ տարի ժամկետով: ՀՀ Ազգային ժողովը հաստատում է արժեթղթերի հանձնաժողովի տարեկան ծրագիրը, բյուջեն և տարեկան հաշվետվությունը: Օրենքի ընդունումից հետո 2001թ. փետրվարին ստեղծվեց նաև Հայաստանի Ֆոնդային Բորսան՝ որպես ինքնակարգավորվող կազմակերպություն: Հայաստանի Ֆոնդային Բորսան

անդամության սկզբունքով հիմնված կազմակերպություն է, որտեղ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Ապահովագրության բնագավառը կարգավորվում է 1996թ. նոյեմբերին ընդունված «Ապահովագրության մասին» օրենքով: Ապահովագրության ոլորտի պետական կարգավորումն իրականացնում է ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունը: Օրենքը չի սահմանափակում վերաապահովագրումը կամ արտասահմանյան ապահովագրական ընկերությունների գործունեությունը Հայաստանում: Կառավարությունը այժմ նախապատրաստում է ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների մասին օրենքի նախագիծը:

### **Կորպորատիվ իրավունքը և կորպորատիվ կառավարումը**

2001թ.-ին ընդունվեց «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը: Օրենքի համաձայն ընկերությունները կարող են լինել բաց բաժնետիրական կամ փակ բաժնետիրական: Բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերը կարող են իրենց բաժնետոմսերն օտարել առանց այլ բաժնետերերի համաձայնության: Փակ բաժնետիրական ընկերություններում բաժնետերերի քանակը չի կարող գերազանցել 49-ը: Բաժնետիրական ընկերությունները ենթակա են գրանցման «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի համաձայն և համարվում են ստեղծված պետական գրանցման պահից: Յուրաքանչյուր ընկերություն պարտավոր է վարել բաժնետերերի ռեյեստր: Օրենքի 47-րդ հոդվածի համաձայն, ընկերության կանոնողությամբ նախատեսված ժամանակահատվածի ընթացքում բաժնետերերը նոր թողարկված բաժնետոմսերի առաջնահերթ գնման իրավունք ունեն, բացառությամբ այդ հոդվածում սահմանված հատուկ դեպքերի:

ՎՋԵԲ-ի կողմից 2002թ. անցկացված կորպորատիվ կառավարման բնագավառի հետազոտության համաձայն, Հայաստանի կորպորատիվ կառավարման օրենսդրությունը (բովանդակությունը, ոչ թե իրական գործողությունը) համարվում է ընդհանուր առմամբ համահունչ կորպորատիվ կառավարման եվրոպական չափանիշներին և որոշ դեպքերում գերազանցում է Բանկի գործունեության այլ երկրների օրենսդրության մակարդակը: Այս եզրակացությունը զարմանալի չէ, քանի որ Միջազգային Ֆինանսական Կորպորացիան 1999-2001թ.թ. Հայաստանում իրականացրել է կորպորատիվ կառավարման համակարգված ծրագիր: Այս ծրագիրը կարևոր դեր է ունեցել ոչ միայն կորպորատիվ կառավարման հիմնահարցերի և գաղափարների ամրագրման առումով, այլ նաև պետական և մասնավոր հատվածներում կորպորատիվ կառավարման նախընտրելի չափանիշների ուսուցանման համար: Այնուամենայնիվ, լավ օրենսդրություն ունենալով հանդերձ, Հայաստանին դեռևս երկար ժամանակ է պահանջվում կորպորատիվ կառավարման ասպարեզում փորձառություն կուտակելու համար: Երկրում դեռ բազմաթիվ ընկերություններ կան, որոնք դեռևս պատշաճ կերպով չեն գրանցել իրենց բաժնետերերին և օրենքի համաձայն չեն տեղափոխել բաժնետերերի ռեյեստրը ՀՀ Կենտրոնական Դեպոզիտարիա: Շատ ընկերություններ կանոնավոր կերպով անց չեն կացնում բաժնետերերի տարեկան ժողովները և նրանց բաժնետերերը ապօրինաբար իրացնում են ընկերության գույքը և չարաշահում իրենց իրավունքները: Հետևաբար, Հայաստանի կառավարությունը պետք է իր ուշադրությունը սևեռի երկու կարևորագույն խնդրի վրա՝ դրանք են. բարձրացնել բաժնետերերի իրազեկությունը իրենց իրավունքների վերաբերյալ և ամրապնդել

համապատասխան կարգավորիչ կառույցների գործադիր կարողությունները (օրինակ՝ ՀՀ Արժեթղթերի Հանձնաժողով):

## **Կոնցեսիաներ**

Հայաստանում չկա ենթակառուցվածքների, քաղաքային կենցաղսպասարկման ծառայությունների և հասարակական ծառայությունների ոլորտում կոնցեսիաների տրամադրումը կարգավորող համապարփակ օրենսդրական դաշտ: Այնուամենայնիվ, վերջին երկու տարիների ընթացքում ընդունվեցին մի շարք օրենսդրական ակտեր, օրինակ՝ հանքահումքային բնագավառի կարգավորման ուղղությամբ: 2002թ. վերջին ստորագրվեց «Հանքանյութի արդյունահանման նպատակով ընդերքի կոնցեսիոն օգտագործման մասին» ՀՀ օրենքը, որը գործողության մեջ դրվեց 2003թ. ապրիլի 1-ից: Օրենքը բավականին մանրամասն կերպով սահմանում է իրավունքները և անդրադառնում է այս բնագավառում արտոնագրերի տրամադրման և պայմանագրերի կնքման գործընթացին, որի արդյունքում սպասվում է ոլորտում ներդրումների աճ:

Նախատեսվում է Առևտրի և Տնտեսական Զարգացման Նախարարության կազմում ստեղծել կոնցեսիաների գործակալություն: Այս գործակալությունը պետք է տրամադրի հանքարդյունահանման արտոնագրերը, վերահսկի նարնց կատարումը և իրականացնի պետական կարգավորում: Կառավարությունը օրենքով նաև հաստատել է օրինակելի պայմանագրերի ձևերը:

Գոյություն ունեն ենթաօրենսդրական ակտեր, որոնք, ի լրումն հանքահումքային ոլորտի, կարգավորում են ջրային ռեսուրսների կառավարման հարցերը և լիզինգային և կոնցեսիոն պայմանագրերի ապահովման նպատակով գույքի գրավադրման մեխանիզմները:

Քաղաքացիական օրենսգիրքը և արտասահմանյան ներդրումների մասին օրենքը ներառում են մասնավոր ներդրողների ներգրավման մասին ընդհանուր դրույթներ:

## **Ապահովված գործարքներ**

1999թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ նոր քաղաքացիական օրենսգիրքը: Շարժական և անշարժ գույքի գրավադրման հարցերը կարգավորվում են 226-272 հոդվածներով: Հայաստանի օրենսդրությամբ ներկայումս նախատեսված է գրավի իրավունքի երկու տեսակ՝ գրավի առարկայի օգտագործման սահմանափակումով և առանց սահմանափակման գրավներ: Առանց օգտագործման իրավունքի սահմանափակման գրավները կարող են գրանցվել կողմերի ցանկությամբ, որը իրականում նախընտրելի է:

Գրավի ենթակա ակտիվների ցանկը սահմանափակ է, քանզի քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում փոփոխական ակտիվների գրավադրում, բացառությամբ շրջանառու միջոցների գրավադրումը, որի դեպքում կարող են գրավադրվել հումքը, նյութերը, կիսաֆաբրիկատները և այլն: Նույնիսկ այդ դեպքում, այս ապրանքատեսակների ընդհանուր արժեքը պետք է հաստատուն մնա և վարկառուն պարտավոր է գրանցել գրավադրված գույքի քանակի և որակի ցանկացած փոփոխություն, ներառյալ դրա վերամշակումը: Եթե վարկառուն չի



ապահովում համապատասխան գրանցում, վարկատուն իրավունք ունի նշել այդ գույքը, դրա հետագա ձևափոխումը կանխելու համար: Հետևաբար, ապրանքանյութական պաշարները և գույքի մի շարք տեսակներ որոնք ենթակա են մշտական փոփոխության, գործնականում չեն կարող պարտքի ապահովման միջոց լինել: Դեռ ավելին, ապագայում ստացվելիք միջոցները, ինչպիսին է օրինակ դեբիտորական պարտքը, չի կարող գրավադրվել:

Հայաստանում գրավային պայմանագրեր կազմելիս վարկատուները հիմնականում նշում են վստահելի հայտարարագրման համակարգի պակասը: Վարկատուները ի վիճակի չեն պարզել, արդյոք տվյալ գույքը ազատ է գրավային իրավունքից, թե ոչ, քանի որ գրավային իրավունքի գրանցումը պարտադիր չէ և թողնվել է կողմերի հայացողությանը: Սահմանափակ գրանցման համակարգ գոյություն ունի միայն բաժնետոմսերի համար՝ որոնք գրանցվում են ընկերության ռեյեստրում, և փոխադրամիջոցների համար՝ որը կատարվում է պետավտոտեսչության կողմից, պարտադիր չէ և դրա արդյունավետությունը ճշտված չէ:

2003թ. ՎՋԵԲ-ի կողմից անցկացված իրավաօրենսդրական չափորոշիչների հետազոտությունում գնահատվում է ՎՋԵԲ-ի գործունեության երկրներում գրավային իրավունքի արդյունավետությունը և նշվում է, որ այդ իրավունքի կիրառումը մեծապես անարդյունավետ է և բարդ: Չնայած կողմերը կարող են նախորոք համաձայնել գրավի ուղղակի վաճառքի մասին, գործնականում դրա կիրառման հավանականությունը ցածր է:

### **Հեռահաղորդակցություն**

Հեռահաղորդակցության ոլորտը ներկայումս վերահսկվում է Կապի և Հեռահաղորդակցության Նախարարության կողմից և կարգավորվում է 1998թ. Հեռահաղորդակցության մասին օրենքով: Օրենքը սահմանել է Կապի և Հեռահաղորդակցության Նախարարության ընդհանուր լիազորությունները և ոլորտի կարգավորման սկզբունքնորը: Օրենքով նախատեսված է անկախ կարգավորիչ կառույցի ստեղծումը, սակայն այդպիսին դեռևս ստեղծված չէ:

Երկրի ազգային հեռահաղորդակցման համակարգը պատկանում է Արմենթել ընկերությանը, որի բաննետոմսերի 90 տոկոսը հունական ՕՏԷ ընկերությանն է: 1998թ. մարտին Արմենթելի բաժնետոմսերը վաճառվեցին հունական ՕՏԷ ընկերությանը 142.5 միլիոն ԱՄՆ դոլարով, որի դիմաց Արմենթելին շնորհվեց հեռահաղորդակցական գրեթե բոլոր ծառայությունների գծով 15 տարվա մենաշնորհի իրավունք որը գործում է մինչև 2013 թվականը և ներառում է քաղաքային ցանցը և բջջային կապը: Այս մենաշնորհը սակայն 1999թ. ՀՀ Սահմանադրական Դատարանի որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել և շնորհիվ միջազգային հանրության ճնշման՝ (այդ թվում նաև ՎՋԵԲ-ի կողմից) բջջային կապի գծով մենաշնորհի ժամկետը նվազեցվեց: Չնայած բջջային կապի մենաշնորհի ժամկետը 15 տարուց դարձվեց 5 տարի (նվազեցվեց մինչև 2003թ.), կառավարությունը դեռևս չի տրամադրել նոր արտոնագիր որևէ նոր ընկերության կամ փոփոխել քաղաքային ցանցի շուկայի կարգավիճակը:

Արմենթել-ում բաժնետոմսեր ձեռք բերելիս ՕՏԷ-ն ստանձնեց հեռահաղորդակցման բնագավառում 265 միլիոն ԱՄՆ դոլար ներդրումներ կատարելու պարտավորություն,

որը պետք է ապահովվեր հինգ տարվա ընթացքում՝ սկսած 1999թ.-ից: Կառավարությունը և ՕՏԷ-ն երկարատև վեճի մեջ են այս պարտավորության կատարման մասին: Այս վեճը և սակագների վերանայման հետաձգումը հակասական իրավիճակ են ստեղծել կառավարության և ՕՏԷ ընկերության հարաբերություններում: Վեճը շարունակում է արգելակել ոլորտի զարգացման ընթացքը և սահմանափակել նրա հեռանկարները: Այս վեճի լուծումը կարևոր նախապայման կստեղծի բնագավառի երկարատև զարգացման և աճի համար: Կողմերը պետք է ձգտեն հնարավորինս արագ համաձայնության հասնել այս հարցում:

Նմանապես կարևոր խնդիր է Հայաստանում հեռահաղորդակցման ոլորտի քաղաքականության սահմանման և կարգավորման իրականացման ֆունկցիաների բաժանումը: Տեղի է ունեցել գործառնական և կարգավորիչ ֆունկցիաների որոշակի սահմանազատում, սակայն անհաժեշտ է կարգավորման ֆունկցիան Կապի և Հեռահաղորդակցման Նախարարությունից վերջնական փոխանցել անկախ կարգավորիչ կառույցին: Այսպիսի կառույցի բացակայությունը շարունակում է բացասաբար անդրադառնալ ոլորտի զարգացման հեռանկարների վրա: Կարգավորչի ստեղծումը թույլ կտար բարձրացնել ներդրողների վստահությունը և բավարար ինստիտուցիոնալ դաշտ կստեղծեր ոլորտը բարեփոխելու համար: Կառավարությունը շարունակ խոստանում է ստեղծել այսպիսի կառույց, սակայն գործնական քայլեր այս ուղղությամբ չեն արվել:

## Հավելված 4 - Ընդհանրային տնտեսական ցուցանիշներ

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
							Կանխատեսում		
<b>Արդյունք և ծախսեր</b>									
	Տոկոսային փոփոխություն								
ՀՆԱ	6.9	5.9	3.3	7.3	3.3	6.0	9.6	12.9	12.0
Մասնավոր սպառում	9.0	3.8	7.3	5.3	1.4	5.9	15.2	5.8	na
Հասարակական սպառում	0.2	-2.4	-2.3	-2.2	1.3	-0.3	3.3	-3.2	na
Համախառն կապիտալագրյալացում	-17.3	10.3	2.1	12.0	0.6	8.7	24.8	19.9	na
Արտահանում	-7.8	-9.7	28.9	8.9	6.5	16.6	20.8	25.0	na
Ներմուծում	-10.3	-5.5	24.4	5.0	-8.1	5.1	1.2	9.4	na
Արդյունաբերական արտադրանք	1.5	1.4	0.9	-2.5	5.2	6.4	3.8	14.2	na
Գյուղատնտեսական արտադրանք	4.7	1.8	-5.9	13.1	1.3	-2.3	11.6	4.4	na
	Տոկոսային փոփոխություն								
Աշխատուժ, միջին տարեկան	-0.8	0.1	-2.8	-4.0	-0.9	-1.0	-2.5	0.3	na
Զբաղվածություն, միջին տարեկան	-0.8	-2.8	-4.4	-2.5	-2.9	-1.6	-1.0	1.4	na
	Տոկոսային փոփոխություն								
Գործազրկություն, միջին տարեկան	6.7	9.3	10.8	9.4	11.2	10.6	9.8	9.5	na
	Տոկոսային փոփոխություն								
<b>Գներ և աշխատավարձ</b>									
Սպառողական գներ, միջին տարեկան	175.8	18.7	14.0	8.7	0.7	-0.8	3.2	1.2	4.2
Սպառողական գներ, տարեվերջի դրությամբ	32.2	5.8	21.8	-1.3	2.1	0.4	3.0	2.0	4.4
Արտադրական գներ, միջին տարեկան	275.4	22.4	19.0	13.4	2.3	0.8	-0.4	2.5	na
Արտադրական գների, տարեվերջի դրությամբ	38.3	9.6	12.4	8.2	3.8	0.4	-4.3	0.9	na
Տնտեսության համախառն ամսական եկամուտներ, միջին տարեկան	243.6	45.7	37.8	31.0	19.2	22.5	5.4	8.1	na
	ՀՆԱ տոկոսային փոփոխություն								
<b>Պետական հատված</b>									
Պետական հաշվեկշիռ	-9.0	-8.5	-5.8	-4.9	-7.4	-6.3	-3.8	-0.6	-2.0
Պետական ծախսեր	28.9	26.1	25.5	25.6	30.1	25.9	20.8	19.5	na
	Տոկոսային փոփոխություն								
<b>Դրամավարկային հատված</b>									
Դրամական զանգված, M2 – տարեվերջ	na	na	8.7	23.3	-2.2	36.3	10.8	15.4	na
Ներքին վարկավորում, տարեվերջ	68.0	27.8	6.3	60.8	7.7	22.2	-3.9	2.9	na
	ՀՆԱ տոկոս								
<< թղթադրամով դրամական զանգված, M2 – տարեվերջ	na	6.5	5.8	6.0	5.7	7.4	7.2	7.2	na
	Տոկոս տարեկան								
<b>Տոկոսադրույքներ և տարադրամի փոխարժեք</b>									
Վերաձիննաձևավորման տոկոսադրույք	52.0	60.0	54.0	39.0	43.0	25.0	15.0	13.5	na
Շուկայական տոկոսադրույք	na	48.6	36.4	27.8	23.7	18.6	19.4	12.3	na
Ավանդների տոկոսադրույք	63.2	32.2	26.1	24.9	27.4	18.1	14.9	9.5	na
Վարկավորման տոկոսադրույք	111.9	66.4	54.2	48.1	34.5	28.6	27.7	23.4	na
	<< դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց								
Տարադրամի փոխարժեք, տարեվերջ	402.0	435.1	495.0	522.0	523.8	552.2	561.8	584.6	na
Տարադրամի փոխարժեք, տարեկան միջին	405.9	414.0	490.8	504.9	535.1	539.5	555.1	573.4	na
	Միլիոն ԱՄՆ դոլար								
<b>Արտաքին հատված</b>									
Ընթացիկ հաշիվ	-218	-291	-295	-403	-307	-278	-201	-176	-163
Անտրադրամի հաշվեկշիռ	-403	-469	-559	-577	-474	-464	-420	-380	-362
Արտահանում	271	290	234	229	247	310	353	516	583
Ներմուծում	674	760	793	806	721	773	773	896	945
Ուղղակի արտասահմանյան ներդրումներ, զուտ արժեքով	25	18	52	221	122	104	70	110	135
Համախառն պահուստներ, տարեվերջի դրությամբ, բաց. ոսկու	100	171	243	298	305	314	329	439	na
Արտաքին պարտք	387	533	679	787	855	862	905	1,025	na
	Ամսական ներմուծման ամիսների հաշվարկով								
Համախառն պահուստներ, տարեվերջի դրությամբ, բաց. ոսկու	1.5	2.1	2.9	3.9	3.8	3.8	3.6	4.5	na
	Արտահանման տոկոսի հաշվարկով								
Պարքի սպասարկում	20.9	20.3	14.2	19.0	14.3	10.7	9.7	10.2	na
<b>Ընդհանուր ցուցանիշներ</b>									
Բնակչություն, միլիոն մարդ	3.1	3.2	3.1	3.1	3.1	3.1	3.1	3.0	na
ՀՆԱ, միլիարդ ՀՀ դրամ	522.3	661.2	804.3	955.4	987.4	1,033.3	1,177.2	1,357.0	na
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	408.9	507.0	522.2	605.1	589.8	615.4	679.8	788.9	na
Արդյունաբերության տոկոսը ՀՆԱ-ում	24.2	23.8	23.9	21.6	21.5	22.0	20.2	20.5	na
Գյուղատնտեսության տոկոսը ՀՆԱ-ում	40.7	33.0	30.4	30.8	25.4	22.5	25.5	23.1	na
Ընթացիկ հաշվի մակարդակը ՀՆԱ տոկոսով	-17.0	-18.2	-18.0	-21.3	-16.6	-15.0	-10.0	-6.6	na
Արտաքին պարտք - պահուստներ, միլիոն ԱՄՆ դոլար	287.4	362.3	435.5	489.0	550.0	548.0	576.2	586.0	na
Արտաքին պարտքի մակարդակը ՀՆԱ տոկոսով	30.1	33.4	41.4	41.6	46.3	45.0	47.2	43.3	na
Արտաքին պարտքի հարաբերությունը արտահանման ծավալին, տոկոս	129.2	144.9	205.5	218.6	223.2	192.9	167.8	146.4	na

Ծանուցում. 1992-2000թ. տվյալները վերցված են ԱՄՀ և ՀՔ պաշտոնական տվյալներից

2002-2003թ. տվյալները հանդիսանում են ՎՋԵԲ-ի գնահատականները

Զբաղվածության վիճակագրությունը արտաջրում է զրանցված գործազրկությունը: Իրական մակարդակը ոչ պաշտոնական տվյալներով ավելի բարձր է:

**Հավելված 5 - Բանկի ընթացիկ և նախապատրաստման փուլում գտնվող ծրագրերը, առ 30 սեպտեմբերի, 2003թ. ; միլիոն եվրո**

**ըստ ոլորտների**

Ոլորտ	ԸՆԴԱՄԵՆԸ					ԶՈՒՏ ՄԱՑՈՐԴ			
	Ծրագրերի թիվ	Ընդհանուր գումար	ՎՋԵԲ ֆինանսավորում	ՎՋԵԲ %	Հատկացվել է	Մնացորդ	Ընդհանուրի %	Զօգտագործված մասը	Ընթացիկ ակտիվներ
Ֆինանսական հաստատություններ	5	4.6	4.6	5%	2.9	2.9	5%	0.2	2.7
Ենթակառուցվածք	2	99.6	67.8	73%	67.8	28.8	56%	0.0	28.8
Էներգետիկա	1	76.9	49.4	53%	49.4	22.5	44%	0.0	22.5
Տրանսպորտ	1	22.7	18.4	20%	18.4	6.3	12%	0.0	6.3
Զեռնարկություններ	3	49.3	20.3	22%	18.9	19.7	38%	1.4	18.3
Գյուղատնտեսական	2	45.6	17.7	19%	17.7	17.1	33%	0.0	17.1
Արդյունաբերական	1	3.7	2.6	3%	1.2	2.6	5%	1.4	1.2
<b>Ընդամենը երկրում</b>	<b>10</b>	<b>153.5</b>	<b>92.7</b>	<b>100%</b>	<b>89.6</b>	<b>51.4</b>	<b>100%</b>	<b>1.6</b>	<b>49.8</b>

**ըստ դասակարգի և տեսակի**

Ոլորտ	ԸՆԴԱՄԵՆԸ					ԶՈՒՏ ՄԱՑՈՐԴ			
	Ծրագրերի թիվ	Ընդհանուր գումար	ՎՋԵԲ ֆինանսավորում	ՎՋԵԲ %	Հատկացվել է	Մնացորդ	Ընդհանուրի %	Զօգտագործված մասը	Ընթացիկ ակտիվներ
Մասնավոր	7	51.2	24.3	26%	21.2	22.6	44%	1.6	21.0
Պետական	3	102.3	68.4	74%	68.4	28.8	56%	0.0	28.8
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>153.5</b>	<b>92.7</b>	<b>100%</b>	<b>89.6</b>	<b>51.4</b>	<b>100%</b>	<b>1.6</b>	<b>49.8</b>
Առանց երաշխիքի	7	51.2	24.3	26%	21.2	22.6	44%	1.6	21.0
Պետական երաշխիքով	3	102.3	68.4	74%	68.4	28.8	56%	0.0	28.8
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>153.5</b>	<b>92.7</b>	<b>100%</b>	<b>89.6</b>	<b>51.4</b>	<b>100%</b>	<b>1.6</b>	<b>49.8</b>
Պարտք	7	150.7	89.9	97%	88.5	50.1	98%	1.6	48.7
Բաժնետիրական	1	1.1	1.1	1%	1.1	1.1	2%	0.0	1.1
Երաշխիքային	2	1.7	1.7	2%	0	0.2	0%	0.0	0.0
Պարտք և բաժնետիրական	0	0	0	0	0	0	0%	0.0	0
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>153.5</b>	<b>92.7</b>	<b>100%</b>	<b>89.6</b>	<b>51.4</b>	<b>100%</b>	<b>1.6</b>	<b>49.8</b>

Ստորագրված ծրագրերը առ 30 սեպտեմբերի 2003թ. միլիոն եվրո

Անվանում	Գումար						Զուտ Մնացորդ			Մասնավոր/Պետական	Ստորագրման տարի
	Ընդհանուր գումար	Պարտք	Բաժնետոմս	Երաշխիք	Ընդամենը ԿԶԵԲ	Հատկացվել է	Մնացորդ	Զօգտագործված մաս	Գործառնական ակտիվներ		
<b>Ֆինանսական հաստատություններ</b>											
Անելիք բանկ	0.9	0.9			0.9	0.9	0.9	0.0	0.9	Մասնավոր	2002
Հայէկոնոմբանկ	0.9	0.9			0.9	0.9	0.7	0.0	0.7	Մասնավոր	2000
Հունաստանի Առևտրային Բանկ	1.1		1.1		1.1	1.1	1.1	0.0	1.1	Մասնավոր	1999
Հայէկոնոմբանկ, ԱԶԾ	0.7			0.7	0.7		0.2	0.2	0.0	Մասնավոր	2002
Հայնեքարտբանկ, ԱԶԾ	1.0			1.0	1.0		0.0	0.0	0.0	Մասնավոր	2001
Ընդամենը	4.6	1.8	1.1	1.7	4.6	2.9	2.9	0.2	2.7		
<b>Ենթակառուցվածք</b>											
<i>Էներգետիկա</i>											
Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկ	76.9	49.4			49.4	49.4	22.5	0.0	22.5	Պետական	1993
<i>Տրանսպորտ</i>											
Երևանի Զվարթնոց օդանավակայանի բեռնահամայիր	22.7	18.4			18.4	18.4	6.3	0.0	6.3	Պետական	1994
Ընդամենը	99.6	67.8			67.8	67.8	28.8	0.0	28.8		
<b>Զեռնարկություններ</b>											
<i>Գյուղատնտեսություն</i>											
Գյուղատնտեսական մեծածախ շուկա	2.7	0.6			0.6	0.6	0.0	0.0	0.0	Պետական	1995
Երևանի Կոնյակի Գործարան	42.9	17.1			17.1	17.1	17.1	0.0	17.1	Մասնավոր	2000
<i>Արդյունաբերություն</i>											
Հայաստանի Պղնձի Ծրագիր	3.7	2.6			2.6	1.2	2.6	1.4	1.2	Մասնավոր	2002
Ընդամենը	49.3	20.3			20.3	18.9	19.7	1.4	18.3		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ Երկրում</b>	<b>153.5</b>	<b>89.9</b>	<b>1.1</b>	<b>1.7</b>	<b>92.7</b>	<b>89.6</b>	<b>51.4</b>	<b>1.6</b>	<b>49.8</b>		
<b>ԵՆԴԱՄԵՆԸ ծրագրեր</b>					<b>10</b>		<b>8</b>		<b>7</b>		